



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





10 NOV 2011

ՆՈՐԱՎԷՊՆԵՐ

ԱՐԳՈՄ ՍԻՄՕՆ

(ԶԳՍՑՆԻԿ)

891.99

Ս - 50

սր

ՆՈՐԱՎԷՊՆԵՐ

Հրատարակիչ

Գ. Գ. ՄԱԶՄԱՆԵԱՍ

ԳԻՆ 50 ՍԵՒ.

1903

ԲՈՒՍՁՈՒՔ

ՏՊԳՐ. Գ. Գ. ՄԱԶՄԱՆԵԱՍ

1001  
1023



3794

## ԽՆԴՐԱՆՔ ՄԸ

Առ Տիկին Ա. . .

Այն ատեն տասներկու տարեկան էի ես, եւ դուն տասն եւ չորս: Հրեշտակ մը սպիտակ շղարչեայ այն շրջազգեստովդ, զոր հագուցեր էին քեզ դպրոցիդ հանդէսին համար. ժամուն պատկերին հրեշտակին պէս այն ատեն: Կաթնաթոյր դէմք մը վարդ այտերով լեցուն ու գիրգ. զոյգ մը խոշոր աչեր՝ մեծ, կլոր բիբերով եւ երկայն թարթիչներով, որք այտերուդ վրայ շուք կը թողէին կիսաբոլորակ եւ ճակատդ վարդի թերթի նման փափկամորթ՝ ոսկի մազերուդ թելերովը պճնուած: Ամբողջութիւնըդ փափուկ, ճիւնի պէս ճերմակ գեղակերտ զանգուած մը, կարմիր ժապաւէններով եւ ուսերէդ ի վար թափուած սրբա մազերով տեղ տեղ ներկուած: Թարմ կեանքիդ յորդաբուն հրապոյրովը եւ ազւորութեանդ վեհ ազդեցութեամբը համակուած՝ քեզ կը դիտէի դադտուկ, ու չէի կշտանար:

Ու օր մը դարձեալ երբ աչերովս անյագ գըբեզ կը լափէի եռանդով, ինձ հանդիպեցաւ նայուածքդ, որ կայծակէն աւելի շուտ ամբողջ սիրտս պատռեց ու ձեղքտեց: Եւ անկէջ վերջ նայուածքդ կը փնտռէի միշտ սրտիս այն առաջին պատուածքին սարսուռոյն օրօրուելու, գինովնալու, անէանալու համար: Ու դուն չէիր գլանար զայն ինձմէ, ու անուշ ժպտով մը գաղտագողի ինձ կուղղէիր, տունէս մինչեւ դպրոց եղած ճամբուն ոլորապտոյտ ուղղութեանը համեմատ, տանդ բոլոր պատահաններուն առջեւ կենալով զողոջուն պատկերի մը պէս: Ու ամեն առաւօտ, այն մութ կանանչ հսկայ ծառերուն զողահար շուքովը հովանաւորուած ամայի այդ ուղին, երկնքի մէջ բացուած ճամբայ մը կը թուէր ինձ լուսեղէն ամպերու գէզերով ցանկապատուած, ուր չէի քալեր այլ կը թռչէի: Մեր անմեղ հոգւոյն վեհ սնունդն էր եղած մեր նայուածքներու այդ համր պերճախօտութիւնն, որ արշալոյսին հետ կը սկսէր ու վերջալոյսին հետ կը վերջանար՝ ահադին հանգստով մը ցերեկին:

\* \* \*

Գիշեր մը, լուսնկայ լոյս գիշեր մը, մայրդ,

քեզ հետն ունենալով, մեզ այցելեց՝ մեր թէնասը նստելու համար: Գլխու հրապուրիչ շարժումով մը ժպտագին բարեւեցիր զիս, մինչդեռ ես, ուրախութեանս, գինովի մը պէս էի: Մեր մայրերուն քով դէմ առ դէմ նստած՝ անոյշ զոգով մը սրտերնիս բարախուն, զիրար ու երկինքը կը գիտէինք, այն ցերեկուան լուսաշող լայն կամարը, որ հիմայ վրան անհամար շողշողուն թռչեր փակցուած սեւ ծածկոյթ մը կը թուէր: Տեսակ մը տաճար կը թուէր երկինքը մեզ ուր հաւատքի պէս բան մը մեր սրտերէն վեր կը բարձրանար մեղմիւ ու ազօթքի մրմունջի եւ խունկի բոյրի պէս անուշութիւն մը կը տարածուէր մեր շուրջը, լայլու, հեծկտալու տարտամ փափաքովն ուռեցնելով մեր կուրծքը:

Այդ գիշերն ամեն մարդէ աւելի երջանիկ էինք մենք, այնպէս որ երբ մայրդ մեկնելու փափաքն յայտնեց՝ մեռնելու իրձ մը եկաւ վրանիս: Մեկնելու պահուն, մեր մայրերէն հեռու, թէոասին սանդուխին վրայ, մօտեցար ինձ եւ ամբողջ ոյժովդ ձեռքս սեղմեցիր—որ ատեն տերեւի մը պէս կը գողգոյսի ես—ու ինձ ըսիր քու ամէնէն անուշ ձայնովդ. «Գիշեր բարի, ես բնաւ չպիտի մոռնամ էք դ»,

կ'երզնում, դուն ալ զիս մի' մոռնար:»

\*  
\*  
\*

Տասնեութ տարեկան էի երբ զիպուածով հարսնիքիդ հրաւիրագիրը ձեռքս անցաւ ոսկեգոծ գրերով: Բոցեղէն տառեր՝ որ աչքերս այրեցին: Չորս տարիէ ի վեր թէեւ բնակութիւնս փոխած, այլ սիրտս միշտ կը յիշէր զքեզ ու այն գիշերն, ու երբեմնակի զքեզ տեսնելս կ'սգեւորէր քեզ համար ունեցած պաշտումս: Երեւակայութեանս մէջ աստուածուհի մըն էիր դուն, որուն կը նուիրէի, գիշեր ցերեկ, իմ ամէնէն մաքուր խորհուրդներս ու զգացումներս: Քու յիշատակովդ սիրտս խմորուած, պատկերովդ հոգիս հպարտ՝ քաղցր յոյսերու ու ջերմ իղձերու իրականացման վրայ կը խորհէի: Պիտի կրնամ՞ նկարագրել քեզ պատրանքի այն փոթորիկը անեղ ու անելի, որ քաղցրագոյն յոյսերուս շքեղապարզ տաճարը կործանեց հիմնայատակ: Մե՛ծ անկում անդընդախոր, ուր էութիւնս կը ջախջախուէր ու պատանիի կեանքս յուսահատութեան մութ մթնոլորտին մէջ կը խեղդուէր: Ինծի ըսին թէ՛ տղայութիւններ էին ատոնք, տղայութեան մէջ տեղի ունեցած: Տղայութիւնս.

հոգւոյն ու աշխարհին այդ ամէնէն մեծ, ամէնէն սուրբ, ամէնէն վսեմ բաները: Թէ չէր արժեք ափսոսալ, կոծել ու խորհիլ անոնց վրայ, թէ խեղդութիւն էր յուսահատիլը:

Տարօրինա՛կ տղայութիւն . . .

\*  
\*  
\*

Այժմ, Տիկին, մեզմէ շատ հեռու, մեր ետին թողած երանութեան այն պատկերովը դեռ յիշողութիւնս լի, կեանքիս այն առաջին պատրանքին ծանր ազդեցութենէն հաղիւ ազատած՝ տարիներու երկարաձիգ շարքի մը շնորհիւ՝ խնդրանք մը կուզամ ընել Ձեզ թախանձանքով: Երբ տասն եւ չորս տարեկան ըլլայ աղջիկնիդ, մի' թողուք զինքը որ պատուհանին առաջ նստի, երբ մանաւանդ զիմացի տունը տղայ մը գանուի:

27 Սեպտեմբեր 1892





## ԱՄՈՒՐԻԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

—Ամուրիութիւնը լա՛ւ բան է, եղբակացուց Մարտիկեան էֆէնտի, իւր ամուրիապաշտպան վարդապետութիւնը ընդարձակօրէն պարզելէ վերջ, յորում տեղ տեղ Թոլթոյի կը մօտենար, եւ որուն, շիտակը, ամենքնիս ալ—մեծ մասամբ երիտասարդներ—իրաւունք տալու փորձութեանը կ'ենթարկուէինք:

—Անշուշտ, ըսաւ Չատիկեան էֆէնտի հանգարտօրէն գլանիկ մը վառելով, անշուշտ ամուրիութիւնը լաւ բան է, սակայն ամուսնութիւնը լաւագոյնն է:

Եւ ապա մուխի առատ յորձանքի մը անցք տալով չրթանցը մէջէն, սկսաւ շարունակել իւր խօսքը, աւելի ճիշդը յանպատրաստից ճառ մը ամուրիութեան դէմ, զոր կարժէր սրղագրել, մանաւանդ այն երկիրներուն համար՝ ուր ամուսնութիւնները նուազելու վրայ են:

Նպիսկոպոսի մը պէս լաւատես եւ գիտունի մը պէս համոզիչ կերպով խօսեցաւ, այնպէս որ երբ վերջացուց, իւր թողած հիացումին տակ ջղազրգիւ, ծափահարել սկսանք յիմարբար, որ ատեն Մարտիկեան էֆէնտի ալ

ըրտէնկօթին փէշերը կը սկսէր թոթուել ակներեւ տհաճութեամբ մը՝ ընդդիմաբանելու համար՝ կարծեմ՝ խօսք փնտռելով:

Բայց պատանի Հիմէնին պաշտպան այս ասպետը ամուրի էր, եւ իւր տարիքն ալ ամուսնանալու տարիքին սահմաններն անցած կը թուէր, գէթ իւր մազերու գոյնէն՝ որ փալլուն սպիտակ էր՝ տեղ տեղ մատնելով սակայն իւր նախկին ոսկի գոյնը:

Այս բանը չէր կրնար կարապետեանի պէս նրբամիտ եւ անակնկալներ ծնուցանող մէկուն համար աննշան մնալ, ուստի սրահը լեցնող աղմուկին մէջ իւր հեղուկ ձայնը լսուեցաւ:

—Ինչո՞ւ ուրեմն, Չատիկեան էֆէնտի, դուք չէք ամուսնացած.

Այս հարցումը՝ յանկարծակի բացուած պատուհանէ մը ներս խուժող ցուրտ հովին պէս՝ պաղ ազդեցութիւն մը ըրաւ նախ: Խոր լուսթիւն մը տիրեց իսկոյն, եւ ապա անդիմադրելի հետաքրքրութեան մը ծնունդ տուաւ մեր մէջ եւ Մարտիկեան էֆէնտիի դէմքը փայլեցուց այն տեսակ գոռոզ գոհունակութեամբ մը, զոր վիճաբանութեան մը մէջ կ'ունենայ մարդ, երբ իւր հակառակորդը ընկճող վերջին բառը կ'արտասանէ:

—Եթէ ամուրի մնացած եւ, պատասխանեց  
Չատիկեան էֆէնտի հանդարտ ձայնով մը,  
պատճառը այն է որ, դեռ չեմ կրցած ամուս-  
նանալ, թէ ինչո՞ւ դեռ չեմ կրցած ամուսնա-  
նալ ահա պատմեմ զայն ձեզ:

«Քսան եւ ութը տարի առաջ՝ քսան եւ ութ  
տարեկան էի: Հինգ տարիէ ի վեր հայրս  
մեռած էր արգէն, եւ Մանչեսթրի վաճառա-  
կանական տունը ինձ մնացած էր ամբողջո-  
վին, որուն գործառնութիւնը ընդարձակած  
էի՝ յաջողութեան տուած ապահովութենէն  
չլացած: Գործերս կարգին էին: Որոշեցի  
ամուսնանալ: Դիրքս լաւ էր, կրնայի եւ կը  
փափաքէի ալ լաւ դրամօժիտ մը ստանալ:  
Դրամօժիտին առաւելագոյն եւ նուազագոյն  
սահմանները որոշած էի, սակայն դեռ չէի  
կրցած շինել մտատիպարը անոր՝ զոր ինձ  
կենակից պիտի ընէի: Միթէ ժամանակ կը  
թողո՞ւն ատոր վաճառականական գրադու-  
ները, որոնք թիւերով միայն սահմանաւոր  
ուած՝ պարտի պահանջներու մէջ կամփոփ-  
ուին: Վաճառականութեան մէջ թերութիւնն  
է ստիկայ, որ վաճառականին կը փոխանցուի:

«Կը յիշեմ թէ, վերջը, շոգեհասին մէջ,  
ստանձին եւ անգրագ մնացած ստեղծ քիչ մը  
պրպակել ուղեցի սրտիս «պահանջը՝» կնոջ  
նկատմամբ: Կարծեմ թուիը խարտեաչէն  
նախամեծար համարեցի այն օրը, քիչ մը  
ուղեցի որ բուսեալ ըլլայ եւ գաշնակ զարնել  
ալ գիտնայ, եւ դեռ շատ մը աննշան, երկրոր-  
դական բաներ, բայց չկրցայ շարունակել  
ամբողջովին՝ առանց չփոթուելու դրամօժի-  
տին զազափարէն, որ չեմ գիտեր ինչպէս մուս  
գտաւ անզգալբարբ, մեղմիւ, ախուսին ընտը-  
րելիք կնոջմէս պահանջած բարոյական հան-  
գամանքներու թուումանը մէջ, այնպէս որ  
այն օրուան նախապատրաստական խորհրդա-  
ծութիւններս երբ վերջացան, իբր եզրակա-  
ցութիւն, ջերմ ըզձանք մը գիս կը յուղէր՝  
ընտրելու ամուսին այն՝ որ պիտի կրնար  
ինձ տալ ինքնին որոշած դրամօժիտիս  
առաւելագոյն գումարը:

«Օր մը պատրաստութիւններ տեսայ մեկ-  
նելու: Վաճառատանս գործերը հաւատարիմ  
ձեռքի մը յանձնեցի, առ առաւելն երեք  
ամսուան համար, այսչափ ժամանակ կը բաւէր  
ինձ ամուսնանալու: Ազգականաց եւ բարե-  
կամաց նուէրներ տանելու համար հետս:

բազմաթիւ գնումներ ըրի, որոց մէջ լայն տեղ մը կը բռնէին քրոջս համար եղածները:

«Մայիսի գեղածիծաղ առաւօտ մը», արշալոյսին Պոլիս հասայ: Ամենէն շքեղն էր այն օրուան արշալոյսը: Անոնցմէ՝ որք բռնի իրենց կը ձգեն ամբողջ հոգիդ՝ լքել տալով քեզ սրտիդ ու մտքիդ լսին զբազումները բոլոր, ու կը գինովցնեն աչքերդ, որք չեն յոգնիր, հոգիդ՝ որ չը յագենար: Եւ իրենց տեւողութեանը մէջ սահմանաւորուած կեանքիդ մասը՝ ամբողջ հիացում մը կ'ընեն, որ կը զգաս թէ անսահման է եւ ամենէն վսեմը, զոր երբէք կարելի է վայելել մարդուն: Արշալոյս մը գիտել հիասքանչ, ամբողջ կեանք մը վայելել է:

«Երբ շոգենաւը խարիսխ նետեց, բարեկամներ եկան զիս գիմաւորելու, որոնք մինչեւ տուն տարին զիս: Կեցուն էր տունը, գրեթէ ամբողջ ազգականներ հոն ժողուած էին: Հինգ տարիէ ի վեր ո՛չ ընտանիքս տեսած էի եւ ոչ արցունք: Երկուքն ալ տեսայ, ուստի բնական էր որ յուզուէի կարի. կարծեմ ես ալ քիչ մը լացի այն օրը: Ծերացեր էր մայրս, զոր սեւ մազերով թողած էի, երիտասարդացեր էր քոյրս, որ մեկնած ատենս տղայ

էր տակաւին: Կեանքը՝ որ մէկէն հոսած էր, միւսին մէջ լեցուած էր:

«Հետզհետէ մեկնեցան բարեկամներէ՝ ու ազգականներէ շատերը, ցերեկուան ճաշին գրեթէ մենք մեզի մնացինք: Մնացողներուն մէջ ազգական չ'ըլլալով մայր մը եւ աղջիկ մը կային: Այդ աղջիկը եւ քոյրս միեւնոյն Անգղիական գիշերօթիկ վարժարանին մէջ կըթուած էին: Հոնկէ իրենց մէջ ծագում առած էր մտերմութիւն մը, որ չեմ գիտեր ինչպէս սկսեր էր, այլ որ իրարու վրայ հոգի տալով կը շարունակուէր: Ապա այդ մտերմութիւնը երկու մայրերուն ալ փոխանցուած էր: Արդէն կը ճանչնայի ասոնք, թէպէտ առջի անգամն էր որ կը տեսնէի, քանզի քոյրս իւր նամակներուն մէջ սիրազեղ գորովանքով մը ստէպ յիշած էր զանանք որ Մատիկ ազգայէնք կ'անուանուէին, աղջկան հօրը անունովը, որ երեք տարիէ ի վեր մեռած էր:

«Կինը չուրջ 50 տարեկան, աղբրեկ մազերով, կիրթ շարժուածքով, աւելի նիհար քան գէր, աւելի տժգոյն քան թուլս, աւելի զուարթ քան եռանդուն մէկն երեւցաւ ինձ առաջին, վեր ի վերոյ նայուածքով մը:

«Աղջիկն, որուն անունն էր . . . Արաքսի,

Չապէլ, Երանուհի, Հրանտյշ, Հայկուհի, Սաթենիկ, Ինչպէս որ կ'ուզէք, օրինակի համար՝ Սաթենիկ, թէպէտ քոյրս ինձ ներկայացուց՝ եկած ատենէս քիչ մը վերջ, սակայն հապճեպով կասարուած այդ ներկայացումն, եւ ճամբորդութենէ վերադարձողի մը բազմադիմի յուզումներն, որք կը թմրեցնէին զիս, թոյլ չը տուին ինձ լաւագոյնս նկատողութեան ատենը իւր գիմագծութիւնը. կարծեմ սանկ աղջիկ մը երեւցաւ ինձ այն ատեն: Բայց վերջը, սեղանին տակ—աւելորդ պատրաստութիւն մը քանի որ մէկերնիս ալ չը կըրցանք ճաշել—իւր զուարթ խօսուածքը՝ մանկան մը ճառողիւններուն պէս թռչտուն, ու ձեռքի եռանդուն ձեւերը՝ խօսքին շեշտերուն համեմատ, ու խնդումներն ու կատակները՝ յղկուած նախադասութիւններով նրբամիտ, եւ վերջապէս արեւելեան եւ արեւմտեան համարձակութեամբ ու պարզութեամբ սիրուն իւր շարժուածքը, զիւրքն, ուշադրութիւնս ամբողջ գրաւեցին: Մասնակցելով հանդերձ սեղանին ուրախ խօսուըտութիւն, որ ձեռնածուի մը զլխարկին պէս ձեւ կը փոխէր, զինքը կը դիտէի՝ հիացումի ծայրահեղ թափով մը:

«Քոսան եւ չորս տարեկան կար: Սեք սեւ մազերով հոճ, երկայն, փայլուն, որոնք ետեւի կողմէն՝ ժամանակին նորաձեւութեան համեմատ երկու մասերով հիւսուած, ծանրօրէն վար կ'իջնալին ուսերէն՝ իրենց լայնքին մէջ՝ ծածկելով ծոճրակն ամբողջ, եւ առջի կողմէն՝ կանացի հոգածութեամբ մը անխնամ թողուած, կը ծածկէին փափուկ, չափաւոր բարձրութեամբ անկիւնաւոր ճակատ մը, որուն մորթը կը փալիլէր «աղաղ»ի մը պէս: Գրեթէ մազերուն թափթփուքին խառնուած ածուխի պէս սեւ երկու հաստ յօնքեր, կարծես չափազէտի մը ձեռքով գծուած յատկապէս այնքան ճիշդ աղեղնաձեւ եւ համաչափ, հպարտութեամբ դէմ առ դէմ տարածուած՝ իրենց հովանիին տակ կը պահէին գոյգ մը խոշոր աչքեր, արտեւանունքնին խիտ թարթիչէ լայն, սեւ ժանեակներով զարդարուն, որոց իւրաքանչիւրը՝ հնոց մը, կեանքի ու կորովի եռացումովը բորբոքուած, բոցեղէն հայուածքներու ցայտումներ դուրս կարձակէր: Խիստ բարեձեւ քիթ մը ու նուրբ չրթունքներ՝ կրակի գոյնով, որոց բացուածքներէն սպիտակ մանր ակոսներու շարք մը կը դիտուէր, անթերի կ'ընէին գեղեցկու-

Թիւնն այս դէմքին, որ աւելի հաւկթածուէր քան կլոր, եւ որուն գոյնը, բաց թուխ՝ որպէս թէ շղարչի մը թեթեւ շուքովն ըլլար ստուերացած, փայլ մը ունէր, որ գրեթէ ակնախտիզ կ'ըլլար այտերուն նուրբ կարմրութիւնովն, որ մինչեւ քունքերը կը տարածուէր՝ վարդի մը թարմութիւնը տալով դէմքին: Անդդիացի կնոջ մը պէս երկայնահասակ էր, այլ համեմատական իւր մարմնոյ մասերն, որք պարզ գորշագոյն շրջազգեստի մը տակ՝ չէին կրնար ծածկել իրենց հրապոյրը: Չայնն ալ քիչ մը նուազկոտ, երգչուհիի մը ձայնին պէս՝ առնական մեղմ հնչիւն մը ունէր, որ կանացի ձայնին խառնուրդովը տեսակ մը չեշտեր կ'ստանար երբեմն, եւ անսովոր հրապոյր մը կ'ընծայէր խօսուածքին:

«Վերջապէս, սիրուն, ուսեալ, նըրամիտ աղջիկ մըն էր ասիկայ, որ վհուկի մը պէս իրեն կը ձգէր ամենքը, խօսուածքին, շարժուածքին, նայուածքին մագնիսացումներովը:

... «Գիշերը կանուխ երբ անկողնոյս մէջ տարածուած՝ խզկէ կ'ուղէի հանդարտ քունի մը մէջ, ճամբորդութեանս եւ մանաւանդ նոյն օրուան անտանելի խոնջէնքը, իրմով պա-

շարուած գտայ միտքս: Անոր քրքիջները միտքս եկան, որոց պատճառով այտերը՝ խոշոր վարդի մը խոշոր թերթերուն պէս կ'ուռննային, յիշեցի նաեւ խօսած ատեն արտեւանունքներուն կծկումները՝ կարի ազդեցիկ պջրումով մը, նոյնպէս եւ իւր բացագանչութիւնները, որք մատամ ճալէցցիօյի «զօլֆէշ»ները կը յիշեցնէին, վերջապէս ասանկ ուրիշ մանրամասնութիւններ բազմաթիւ, որոց շփոթ իրարանցումին տակ՝ քունս կ'արգիլուէր: Զարմացայ մտքիս այս կացութեանը վրայ, որ բոլորովին նոր էր. ու ինձ համար խիստ անյարմար գտայ՝ բոլոր այս անօգուտ ու աղայական յիշատակութիւնները, որք տասն եւ հինգ տարու աղու մը պէս ընդունակ կ'ընէին զիս յուզումներու, յուզումներ՝ որք քաղցրագոյն յոյսի մը անոյշ յոյգերուն կը նմանէին: Քնանալով չկրցայ ազատիլ սրտիս այս վրդովումէն, երազիս մէջ գինքը տեսայ, միշտ ազուր, միշտ հրապուրիչ: Առաւօտուն երբ արթնցայ, հաւատարիմ սեննեկապանի մը պէս ինձ կ'սպասէր այս սպաւորութիւնը, նորէն համակուեցայ անով, այս անգամ տարօրինակ փափաք մըն ալ զգայի, անոր տեսութիւնը մինչեւ երեկոյ

անընդհատ վայելելու, ինչպէս եղած էր առջի  
օր: Տղու մը պէս յուսալով անցուցի այն օրը,  
ոչ ոք երեւցաւ, ու ես ալ չեմ գիտեր ինչո՞ւ  
չը համարձակեցայ հարցնել մօրս կամ քրոջս  
թէ՛ ինչո՞ւ չէին գար Մատտիկ աղայէնք:  
Նոյն գիշերը խորհուրդ մը ունեցայ, Սաթե-  
նիկը—կարծեմ այսպէս անուանեցինք զին-  
քը—մեր տունը բերել տայու համար հետեւ-  
եալ գիշերուան համար երեկոյթի մը կազմա-  
կերպութիւնը:

«Փայլուն երեկոյթ մը ըրինք: Անոնք ալ  
եկան: Աւելի ազուրցեր էր այն գիշերը, իւր  
ձերմակ մուսլինէ չըջազգեստով, որուն թա-  
փանցկութեանը տակ՝ բազուկները ու վիզը  
մեղրամոմի երեւոյթն ունէին, եւ որ հասա-  
կին նրբութիւնը երեւան կը հանէր յաւեր-  
ժահարսի մը դողդոջուն պատկերին պէս աչք  
խտրտացնելով: Այն գիշեր որոշակի զգացի  
թէ՛ այդ աղջիկը անհունօրէն կը սիրէի եւ  
թէ անոր համար ունեցած պաշտամս ամենէն  
սաստիկն էր: Պարի ատեն շունչը անոյ՛ հոտի  
մը պէս կը ծծէի եւ փափուկ իրանը գրկացս  
մէջ անբացատրելի ոգեւորումով կը սեղմէի,  
եթէ երբէք կարելի է սեղմում անուանել  
յուզումէ ընթարմացած ու տարօրինապէս

վեհերոտ բազուկներու չըջապատում մը:

Կ'ուզէի որ այն գիշերը չը լուսնար: Եր-  
ջանկութեան ատեն գիշերները բուպէներ են  
որոց դարեր ըլլայուն՝ երբէք ըզձանք չը  
պիտի պակսի աշխարհի մէջ:

«Հետեւեալ գիշերը անոնց գացինք: Ամենա-  
պարզ ձեւ մը բանեցուցի այս կարգադրութիւ-  
նը ընձեռելու համար: Յերեկը քնացած էի,  
այնպէս որ առջի գիշերուան քնատութենէն  
ոչինչ մնացած էր զարթումիս պահուն, երբ  
գիշեր եղաւ զժգոհութեան ու ճանճրոյթի  
նշաններ սկսայ ցոյց տալ մօրս. միթէ վա-  
նականի պէս սենեկիս պատերուն մէջ ժա-  
մանակ պիտի անցնէի, զբօսանքի ոչ մէկ  
տեղ ունէր թաղը, մինչդեռ Մանչեսդրի մէջ  
կը վխտային այսօրինակ տեղեր:

«—Անանկ է նէ հայտէ քիչ մը Մատտիկ  
աղայէնց երթանք, ըսաւ մայրս ինձ ժամանց  
մատակարարելու միամիտ համակերպու-  
թեամբ մը:

«... Երբ գուռը բացուեցաւ Սաթենիկ  
եղաւ մեզ զխմաւորողը:

«—Օ՛հ, Մօսկ... կեան... :

«Ահա այս աղ... կազը զոր ի տես մեզ արձա-  
կեց, երկու թեւերը բանալով, ուրախութեան

ու զարմացումի այն բարձր շեշտովը, զոր  
 թատերաբեմներու վրայ լսած էի եւ որ գի-  
 շերուան այդ ժամուն, դրան մը առաջ, ուրիշի  
 մը երկիւղ պատճառեր գուցէ, սակայն ինձ  
 անսահման հաճոյք մը պատճառեց թերեւս անոր  
 համար որ՝ յուզումներուս համապատասխանող  
 գգուանքի մը երեւոյթը կը նշմարէի մէջը:  
 Յետոյ տուն վերադարձիս այդ ազդակը  
 աղւոր երաժշտութեան մը արձագանդին պէս  
 կը թրթոար դեռ ականջիս մէջ, եւ որուն  
 օրօրովը քնացայ նոյն գիշեր:

«Հետեւեալ գիշերն ալ թատրոն գացինք:  
 Անոնք ալ հեռ: Տեսնելու արժանի էր ար-  
 դուզարդը: Բաց կապոյտ մետաքսեայ շրջազ-  
 գեսա մը հազած էր, որ կազի լոյսերուն  
 անդրադարձութեամբը ցօլքեր կ'արձակէր:  
 Մազին սեւը, այտին կարմիրը, շրջազգեստին  
 կապոյտը զգլխիչ կ'ընէին Սաթենիկի ամ-  
 բողջութիւնը: Դէմը նստած անյագ եռանդով  
 մը կը զիտէի զինքն ու անբացատրելի հը-  
 պարտութիւն մըն ալ կը զգայի՝ տեսնելով  
 կիներն ու աղջիկներն, որք նախանձոտ նայ-  
 ուածքներով մեր օթեակը կը զիտէին իրարու  
 բաննր մը փափալով, ու երիտասարդներն,  
 որք սպուշի մը պէս հիացմամբ համակուած

չէին կրնար բաժնել իրենց աչքերը մեր  
 օթեակէն:

«Շատ ջանք ըրի վերջը՝ յիշելու այն գի-  
 շերուան ներկայացումը: Անօգուտ եղաւ:

«Թատրոնէն վերադարձին մեր սուենը գա-  
 ցինք քիչ մը նստելու: Պայծառ գիշեր մըն էր  
 ու լուսնկան ալ սքանչելի, երկնքին մութ  
 գորշ կամարին վրայ մէկ երկու ամպեր եւեթ  
 կը տեսնուէին, անսահման դաշտի մը վրայ  
 կորսուած սպիտակազգեստ փոքրիկ աղջիկ-  
 ներու պէս՝ ասդին անդին պտակելով դան-  
 գաղազնաց: Փողոցին դուռները բացինք ու  
 բակը նստեցանք: Բոլոր անոնք, որք օթեակի  
 մը երեք պատերուն մէջ՝ ամբողջ ներ-  
 կայացման մը տեւողութեանը՝ իրենց պաշ-  
 տելիին մօտ դանուած են, անոնք միայն  
 կ'ըմբռնեն այն տագնապներն, որք կը փե-  
 թուէին կուրծքս երբ Սաթինիկին քիչ մը  
 յետոյ ինձմէ բաժնուելուն զաղափարը միտքս  
 կը բերէի:

«Երբ մեկնեցան, տղու մը պէս ետեւնուն  
 նայեցայ, ու տիմար ըզձանք մը ունեցայ մեր  
 սպասաւորին տեղն ըլլալու, որ մօրս հրամա-  
 նին համեմատ՝ մինչեւ իրենց տունը զանոնք  
 պիտի տանէր ձօնուով:

«—Ա՛հ, հոս մոռցաւ Սաթիւնիկը իր հողմահարը, ըսաւ քոյրս քօնստիւն վրայ Սաթիւնիկին հողմահարը տեսնելով:

«Կապոյտ նկարէն հողմահար մըն էր ասիկայ, փղոսկիւններով շինուած՝ մետաքսեայ, եւ թռչունի կակուղ փետուրներով շուրջանակի եղբրուած:

«Հողմահարները վարդերու կը նմանին, բուրում կունենան: Աս ալ օբօբօնաքս կը հօտէր, Սաթիւնիկի սիրած հօտը: Դիտելու նպատակաւ ձեռքս առի հողմահարը, ասդին անդին գարձուցի, եւ երբ աստիկով եզայ թէ քովս մէկը չը կայ, ուժգին մը հոտոտեցի, եւ ինչ մեղքս պահեմ, չրթունքներուս ալ տարի դայն՝ ծայրայեղ ոգեւորումով մը դողահար: Ապա կրկին հոտոտեցի թոքերուս ամբողջ ուժովն, սիրած աղջկանս սիրած հօտին աղղեցութենէն գինովնալու նպատակաւ:

«Վերջը, երկու տարի յետոյ, երբ օբօբօնաքսի հոտ առի՝ շատ զէշ կերպով աղբուեցայ:

Այն գիշեր, թրջուած սունկի պէս լեցուած Սաթիւնիկի ներգործութիւնովը Ռօմէոյի մը պէս սահպ հատաչեցի եւ Ռաֆայէլի մը պէս պղատոնական տաճարին աղօթքները մըմըն-

ջեցի: Այս աղջկանը հետ պէտք է որ ամուսնանամ, ըսի ինքնիրենս: Սաթիւնիկի հետ ամուսնանալն երջանկութեան հետ ամուսնանալ էր: Դրամօժիտը միթէ կրնա՞ր ընձեռել ինձ այն յուզումներն՝ որք շատ անոյշ էին եւ աւելի անոյշ քան աշխարհիս ամենէն անոյշ բաները: Ու մտադրեցի հետեւեալ օրը մօրս խմացնել առաջադրութիւնս, սակայն ի վերջոյ յետաձգեցի, նկատելով որ՝ հազիւ չորս օրէ իվեր եկած էի, որով կարի անհամբերութիւն ցոյց տուած պիտի ըլլայի: Ապա ուրիշ գաղափար մը յետաձգման որոշումիս մէջ աւելի պահեց զիս: Սէրս վիպական ընել կ'ուզէի քիչ մը, աւելի բանաստեղծական, սանկ քիչ մը խոստովանութիւններ՝ ծառի մը հովանուոյն տակ կամ թաւուաներու ետեւ, սիրոյ (տուօն), ինչպէս ըսուած է արդէն, երգել՝ զեփիւռին մեղմ շունչին ընկերակցութեամբն, որպէս ջութակի մը թրթումանը: Ու գաղափարաց զուգորդութեամբ մը Քեահատանէն յիշեցի, որ գետակ մը ունէր հանդարտօրէն սահող, անտառակ մըն ալ բարձրաբերձ ծառերով եւ թաւուաներ եւ հովիտներ եւ ամացութիւն, բոլոր բաները բանաստեղծական: Այո, հոն կերթայինք



հետեւեալ օրը: Այս գիւտիս առթած զուարթագին գրգռմանը տակ՝ վարդագոյն յոյսերուս սնունդ տալ սկսայ հետեւեալ օրուան համար:

«Շատ քիչ քնացայ նոյն գիշերը, այն ալ առաւօտեան դէմ, լաւ կը յիշեմ որ ընդոստ արթնացայ առաւօտուն, թէպէտ սովորականէն քիչ մը ուշ, պատրաստութիւնները փութով տեսնելու համար: Մօրս յայտնեցի խորհուրդս: Շուտով կառք վարձելու զրկեցինք սպասուորն, եւ ես անհամբեր անձկութեամբ մը համակուած՝ վրաս առի Մառտիկ աղայէնց երթալ իմացնելը: Մեկնած պահուս հոգմահարը հետս առի Սաթենիկին յանձնելու համար:

«Կերեւայ թէ ճամբան ուրախութենէս այլայլուն վազքով մը գացեր եմ, քանզի որմնադիր մը, ընդ երկար՝ ետեւէս՝ զիս դիտելէ վերջ, ըսեր է իւր քովի ընկերոջը.

«—Ահա մէկն, որ կ'ինը աղաբերքէ ազատուուն լուրը կը տանի իր զօքանջին:

«Երբ գրան առջեւ հասայ, ձայնը լսուելու աստիճան կը փափախէր սիրտս: Գուռը կամաց մը զարկի եւ սպասեցի կաթնալաճառի մը նայելով, որ իսկապէս աղեղ ծերուկ մըն էր եւ որ խիստ գեղեցիկ կերեւար ինձ:

«Քայլափոխի թեթեւ շուկ մը լսուեցաւ դրան ետեւէն, եւ ահա զուռը բացուեցաւ: Քայլ մը առի ներս մտնելու համար, այլ յաջորդ քայլս սեմին վրայ կառչած մնաց. կարծես յանկարծակի փրուզում մը տեղի ունեցաւ հողոյս խորն, ու ցո՛ւրտ, խիստ ցո՛ւրտ ապաւորութիւն մը՝ ուժեղ հոսանքի մը պէս արգիլեց զիս յառաջնալ, արձանի մը պէս մնացի հո՛ւն, սեմին վրայ. վար չիյնալու համար դրան կրթնելով:

«Գուռը բացողը Սաթենիկն էր: Չեռքը անձնոց մը կար, որով երեսը կը չորցնէր: Ն'երեւար թէ՛ նոր ելած էր անկողնէն եւ կ'երեւար թէ՛ դեռ նոր լուացած էր երեսը: Զիս տեսնելուն պէս նախ խոյս տալու շարժում մը ըրաւ եւ ապա անձնոցով դէմքը ծածկելու ջանք մը ունեցաւ, բոլոր ասոնք այնչափ ժամանակուան մէջ, որքան պէտք եղած էր ինձ առաջին քայլս սեմէն ներս անցնելու համար: Յետոյ դառն որոշումի մը համակերպելու պէս անձնոցը դէմքէն վար առաւ եւ ներս հրաւիրել ուղեց զիս ժպիտով մը, որ դառն բան մը ունէր մէջը: Այն ասեմն էր որ ունեցայ այն ապաւորութիւնը, որ աննկարագրելիներէն է. ամբողջ այն

զանութիւնը, խորշանքը, սարսուռն՝ զորս կ'ունենայ մարդ՝ երբ գեղակերտ ապարանջան մը հիացումի յաիշտակութեամբ զնստակին անցուցած պահուն. իսկոյն պաղ օձի մը փոխուիլը կը տեսնէ մատուներուն մէջ կամ պլլուած: Եթէ ճիշ մը չարձակեցի, պատճառը այն է որ ձայնս նուազեցաւ:

Քէմքին վրայ ոչ փայլ, ոչ կարմիր, ոչ թարմութիւն կար, ամբողջ մորթը կաշիի մը պէս խիստ թուխ, վրան տձեւ, անկանոն, խոշոր, ազաի պէս տարածուած բիծեր ունէր: Հաստ, երկայն, սեւ յօնքերուն տեղ՝ երկու կտոր, կարճ, շագանակագոյն մազէ գիծեր կային ծուռ ու մուռ: Մարմարիոնի պէս փայլուն ճակատին տեղ՝ քերծուած մորթի պէս մրոտ բան մը: Աչքերուն տեղ՝ երկու թայ ծակեր, զուրկ երկայն ու սեւ թարթիչներու շրջանակէն, որոց մէջէն նայուածքը մորկ բան մը ունէր: Երթունքները քուրջի պէս գունատ, որոց վերինին վրայի մորթը, փեթաուած մազերուն պատճառով, բազմաթիւ, սեւ, յայտնի ծակոտիքներ կը կրէր

«Աւերուն այս դէմքը շատ քիչ բան կը յիշեցնէր այն դէմքէն, զոր կը պաշտէի: Մե՛ծ, զա՛ոն անակնկալն էր ասիկայ:

«Սաթենիկ հասկնալով կրած հակազգեցութիւնս, որուն սաստկութիւնը դէմքս ալ անշուշտ բացայայտօրէն կ'արտայայտէր, վայրկեանի մը չափ լուռ կենայլէ վերջ, յանցաւորի մը պէս հաղիւ լսելի ձայնով ըսաւ.

—Ներս հրամմեցէք, Մօսիէօ Զատիկեան:

—Հողմահարնիդ յանձնելու եկայ, օրիորդ, զոր երէկ գիշեր մեր տունը մոռցած էիք, ըսի ամենացուրտ շէտով մը:

\* \* \*

Անկէ ի վեր շատ քիչ հանդիպած եմ արհեստական չեղող գեղեցկութեանց, սակայն անոնց համար ալ չեմ զգացած ինչ որ զգացած էի Սաթինիկի նկատմամբ, առաջին անգամ:

29 Դեկտեմբեր 1892



## ՊԶՏԻԿՆ

Ա.

Ժամանակ մը այն թաղը դպրոց մը ունէր, դպրոցը՝ տղաքներ, եւ տղաքներն ալ սովորութիւն մը:

Այս սովորութիւնը պարզ այլ գեղեցիկ էր: Վարժարանին բոլոր աշակերտները, թէ մանչ եւ թէ ազջիկ, պարտաւոր էին երեքշաբթի եւ շաբաթ առաւօտներն եկեղեցի երթալ:

Հոն կը կենային մինչեւ «Ացաք ի բարութեանց», եւ ապա դպրոց կը վերադառնային իրենց կառավարիչներուն առաջնորդութեամբը:

Շաբաթ առաւօտ մը տղայք հետզհետէ՝ սովորականին պէս՝ եկեղեցի կը լեցուէին:

Գուրբ սաստիկ ցուրտ կար, գետինը սառ էր կապեր, ու ձիւնի փոշի մը, զոր հիւսիսային քամի մը երկնքին գորշ երեսէն վար կը փչէր ուժգնակի, կատղնտէր, որպէս կըսեն հիմայ, ձեռքի ու զէմքի մորթեալը:

Պատարազը կէս էր եղեր, երբ տղայ՝ մը

ներս մտաւ եկեղեցիին դռնէն. ութը տարեկան կար: Երկայն բալթօ մը հագած էր չուխայի հին կտորներով շինուած, բաւական հասակեկ, որուն լայն ու մաշած թեւերուն բացուածքները ցոյց կուտային զոյգ մը պզտըտիկ ձեռքեր՝ վարդագոյն մատներով, որոնք պաղէն խածատուած՝ կասկապուտ կտրեր էին, հակառակ տղուն ջանքին, որով կարելի եղածին չափ ցուրտէն պարտկել ուզելով զանոնք, բազուկները բալթօյին թեւերուն մէջէն ետ ետ էր քաշեր՝ ուսերը անկած ու արմուկներն ալ կէս մը ծոած գիրքով:

Աջ ձեռքին ցուրտէն ընդարմացած մատուրներուն մէջ սեղմուած՝ ձերմակ աղտոտ ծրար մը կը տեսնուէր պզտիկ, եւ այնքա՛ն պզտիկ, զոր մարդ մը կրնայր երկու ափերուն մէջ բոլորովին աներեւութացնել: Գլուխը սեւ ապայէ խոշոր կնգուզ մը անցուցած էր, եւ որուն վարի եղերքէն կարուած երկու մատի լայնութեամբ չուխայէ շինուած կապիչները՝ վզին բոլորաթիքը անգամ մը դարձուելէ վերջ, կապուած էին անխնամ կապով մը: Դէմքն այս կնգուզին մէջ գրեթէ կորսուած էր, միայն նուրբ քիթը կերեւար,

չուրջի կանաչները փեթտուած վարդի կոկոնի պէս բան մը:

Ներս մտնելէ վերջ, գաւիթը, կօշիկներու յատկացուած ցեխոտ պահարաններուն մօտեցաւ, որոնք հիմայ տղաքներուն կօշիկներովը, սակառներովն ու պայուսակներովը լեցուած էին: Չեռքի ծրարը, որ ցերեկուան ճաշէր, սակառի մը քով դրաւ. կերեւայ թէ սակառէն կծու հոտ մը առաւ, քանզի իւր ծրարիկը վերցուց անոր քովէն, ու ակներեւ տճածոթեթեամբ մը գէմքը թթուեցնելով ըսաւ.

—Ո՛ւՖ, ձենձ կը հոտի կոր աս սէբէթն ալ:

Ու ուրիշ տեղ մը դրաւ իրենը: Ապա բաւական դժուարութեամբ կնգուզը հանեց գլխէն, եւ անա փոքրիկ, կլոր, թխորակ գէմք մը երեւան ելաւ խնձորի պէս կարմրեցած, սեւ յօնքերով, վառ աչքերով, նուրբ շրթունքներով, մանկական աղւոր գէմք մը, քիչ մը տխուր սակայն: Հասգճեպով մը կնգուզին կապիչները ժողուըտեց, ու կնգուզին մէջի կողմը դրաւ զանոնք. ու քիչ մը խորհելէ վերջ, մեքենարար ծրարիկը վերցուց դրած տեղէն, եւ ան ալ կնգուզին մէջը դրաւ՝ տոպրակի մը մէջ դնելու պէս. ու յետոյ խուզարկիչ ակնարկ մը նետեց այլ եւ այլ

մեծութեամբ սակառներու անկանոն շարքին վրայ, ուր բաց տեղ մը տեսաւ, ու հոն խօթեց իրենը:

Քայլ մը առաւ այդ տեղէն հեռանալու համար. եւ անա պահարանին վարի յարկին մէջ շարուած կօշիկներուն քով նոր լաստիկ մը տեսաւ վրան սերսեւ, փայլուն, եւ մէջը կարմիր՝ կեռասի պէս. ըզձանքի փայլ մը շողաց աչքին մէջ, ապա իրեններուն նայեցաւ, հաստ, խոշոր կօշիկներ, որոց մէջ՝ իւր ոտքերուն հետ՝ ձեռքերն ալ կրնար մտցնել. եւ ծակած ալ, ու ամբողջ ցեխոտ:

—Հի՛չ սա մայրիկս ալ խուռտուռանքս չը սրբեր, մրմոաց ինքնիրեն բարկութեամբ մը շրթունքները երեքցնելով: Ապա խորհեցաւ կօշիկները հանել, սակայն քիչ յետոյ ուսերու արհամարհոտ շարժում մը ըրաւ, եւ ներս յառաջացաւ եկեղեցիէն, քայլափոխին աղմուկովն արարողութիւնը խանդարելու դողէն՝ ոտքի մատուրներուն ծայրին վրայ կոխելով, ու գնաց իւր ընկերներուն քով կեցաւ:

Բ.

Այն օրը խորանին աջ կողմը պզտիկ խորան մըն ալ չտկեր էին: Չորս կողմը տատամտոտ

նայուածք մը պտտցնելէ վերջ՝ նշմարեց այդ փոքրիկ խորանը, ու սկսաւ անմեղ խընդումով մը դիտել զայն. անի՛նչ քօնափ բան էր. վրան մոմեր, խաչեր, աւետարան, մատենք, ամեն բան կար:

Ո՛հ, ինչե՛ր չէր տար եթէ այդ խորանը իրեն տրուեր:

—Վաղը կիրակի է. ըսաւ միտքէն. ես ալ անանկ խորան մը կը շինեմ:

Ու յաջորդ օրուան համար պատրաստած այս ծրագիրը մաքուր ակնկալութեան մը անուշ հրճուանքովն ուռեցուց իւր կուրծքը: Յետոյ առանց նայուածքը խորանէն բաժնելու՝ սկսաւ ձայնակցիլ երգուած շարականներուն՝ տղու բարակ եւ չը յղկուած ձայնին սիրուն կոչտուած թիւնները թափթփելով բերնէն, որոց կը խառնուէին բառերու արտասանութեանց ամեն այլանդակ ըմբռնումները, անխմատ ու անբնական:

Այլ յանկարծ իւր տղու զուարթագին թմրութենէն ցաւագին զարթում մը ունեցաւ, իսկոյն դէմքը մթադնեցաւ տխուր մտայնով մը, զաղբեցաւ երգելէ, ալ աչքին ոչ փոքրիկ խորանը կերեւար եւ ոչ երգեցողութիւնը: Իւր չրթունքներուն գունատու-

թիւնը եւ նայուածքին նուաղկոտ ցոլքերը ներքին խռովայոյզ վիճակ մը կը մատնէին:

Միաքը եկեր էր առջի գիշերուան պատահածը:

Հայրը գիշերը կառքով բերեր էին տուն. քանի մը հողիններ, անձանաչ մարդեր գրկեր եւ անանկ դռնէններս մտցուցեր էին զայն, ու վարի սենեակը դրեր էին՝ եւ իրեն ալ թոյլ չէին տուեր քովն երթալու: Մայրը ի տես հօրը՝ լացեր պոռացեր եւ մագերն էր փեթտեր, նոյնպէս նաեւ մեծ մայրը: Ինքն ալ անտոնց լացը տեսնելով լացեր էր: Գիշերով քահանայ բերել տուեր էին. քիչ մը վերջը զլխարկաւոր մարդ մը եկեր էր, որ հօրը սենեակը քիչ մը մնալէ վերջ մեկներ էր, հօրեղբարը, մօրաքոյրը, հօրաքոյրներն ամենքն ալ տունը ժողուուեր էին: Ինքը—տղան—ասղին անղին սլքտացեր էր բան մը հասկնալու համար տունին այս անօրինակ իրարանցումէն, սակայն բան մըն ալ չէր կրցեր հասկնալ, միայն անգամ մը իմացեր էր որ մօրաքոյրը կ'ըսէր հօրեղբօրը.

—էմմէ է . . . :

Ի՞նչը կ'ըսէ էր. եւ ի՞նչ էր կ'ըսէին:

Ապա պահ մը մայրիկը առանձին գտնելով

հարցուցերէր անզուսպ հետաքրքրութեամբ մը  
— Ի՞նչ է էմմէն:

— Հիչ, տղա՛ս, բան մը չէ, պատասխաներ էր  
մայրը դժուարաւ զսպելով յուզումը:

— Ինչո՞ւ վեր չի գար կոր հայրիկս . . .

— Շատ զինով է անոր համար:

— Ինչո՞ւ նորէն խմեր է . . .

— Ծօ չիտե՞ս հօրդ խուլը, նորէն եարուն  
կռիւ է ըրեր, ինչ է ըրեր, գացեր խմեր  
խմեր էլէր էկէր է:

Ահա այսչափ կրցած էր իմանալ, եւ ապա  
պառկեցուցեր էին զինքը, ինքն ալ մինչեւ  
առտու գնացեր էր:

Առաւօտուն՝

— Հայրիկս նորէն վարի օտա՞ն է, հարցու-  
ցեր էր մօրը:

— Հա, տղա՛ս, վարի օտան է ամմա քովը  
մ'երթար, շատ հիւանդ է, ըսած էր մայրը,  
եւ արդարեւ տղան հիմայ խուլութեան ձայն  
մը կը լսէր վարի սենեակէն, սիրտ յօշոտող,  
սոսկալի խուլութեան մը:

Այդ ձայն այնքա՛ն գէշ, այնքա՛ն տխուր  
ազդեցութիւն մը ըրեր էր վրան, զոր չը  
լսելու համար աճապարեր էր դպրոց երթալու:

Հիմայ բոլոր ասոնց վերջուշունները,

անսահման դառնութեան մը անասելի մոր-  
մոքումովը կը խածառէին սիրտը: Խուլութեան  
յիշելով ամբողջ մարմնովը կը սարսուար,  
կոկորդը կը ցամքէր, նուազումի պէս բանով  
մը աչքերը կը մթննային . . . այնպէս կը  
թուէր իրեն թէ սրտին մէջ երակներ կը  
կարտէին:

Երբ հանդարտեցաւ քիչ մը իւր պղտիկ  
սրտին այս մեծ ալեկոծանքը, նշմարեց քա-  
հանայն, որ «ծանուցում» կընէր «Տէր ողոր-  
մեա»ի համար:

— Աղէկ միտքս եկաւ, ըսաւ ինքնիրեն,  
«Տէր ողորմեա»ն հիւանդներու համար կը  
զրուցեն: Ու երբ «Տէր ողորմեա»ն սկսան  
եղանակել ձայնաւորներն, ինքն ալ ձայնակ-  
ցեցաւ անոնց, այլ երբ «Տուր հիւանդաց  
բժշկութիւն» ասողը պիտի սկսէր երգուել՝  
ձայնը կտրեց, երկու բազուկներն անօրինա-  
կօրէն անկեղծ ջերմեռանդութեամբ մը բա-  
ցաւ, աչքերը մեծ խորանին մոմի լոյսերով  
ողողուած Յիսուսին պատկերին ուղղեց, ու  
պաղատագիրն, ու սրտակեղեկ ձայնով մը  
աղաղակեց:

— Ա՛խ, Աստուած, հայրիկիս ալ բժշկութիւն  
տուր:

Շատ դժուարաւ կրցաւ մնալ դպրոց այն օրը. անդիտակից անհամբերութիւն մը կը կը բզբաւէր սիրտը: Այն օրուանին պէս վարժարանը գէշ երեւցած չէր իրեն. կառավարիչը ճիւղի մը սոսկացնող տպաւորութիւնը կը թողուր վրան եւ աշակերտակիցներն ալ օձերու:

Ճաշի ատեն հաց չը կերաւ, ու զբօսանքի ատեն «հեղարան»ը պատուեց. վերջը հասակակից աղու մը ուժով կից մը զարկաւ եւ վարժապետն ալ իրեն թեթեւ ապտակ մը:

Այս ապտակին համար երկու ժամ լացաւ մլիկ մլիկ,

Վերջապէս ազատ եղաւ, վազելով գնաց տուն, այլ չուզելով գնաց: Հօրը խոլտուքը զինքը կը սոսկացնէր:

Տունը լեի լեցուն էր, ազգականներ, բարեկամներ ամենքն ալ հոն էին, ամենքն ալ սեւեր հագած, գլուխին սեւ խարաքմաներ կապած մինչեւ յօնքերնին, ու ձեռքերնին ալ սեւ եղբրքով թաշկիխակներ ունէին:

Երբ սենեակէն ներս մտաւ, ուրիշ բան չը տեսաւ. բայց եթէ սեւազգեստ կիներ

կարմիր աչքերով. ու ցո՛ւրտ, խիստ ցո՛ւրտ ալ լուսթիւն մը: Ի տես այս մութ տեսարանին ապշեցուցիչ գող մը ունեցաւ եւ լալու ալ բուռն փափաք մը:

Յանկարծ մօրը ձայնը լսեց անկիւնէ մը.

— Հոս եկուր. եավրում . . .

Այս ձայնը, ուր մայրական սրտի մը ամբողջ գորովը եւ միանգամայն զսպուած դառնութեան մը ամբողջ թրթուումը կար, այնքա՛ն նուազուն եւ այնքա՛ն յուզիչ էր, որ պահ մը կարծեց թէ ձայնը մօրը ձայնը չէ, այլ նայուածքովը ապահով ըլլալէ վերջ, խելայեղ, երկու ձեռքերը բանալով մօրը գիրկը նետուեցաւ:

Մայրը երկու այտերէն ալ ուժով մը համբուրեց, մինչեւ այն տեն աստանկ զինքը չէր համբուրած. ապա մօրաքոյրը, հօրաքոյրները եւ սենեկին մէջ գտնուած բոլոր կիները ձեռքէ ձեռք քաշեցին զինքը ու համբուրեցին եւ այնքա՛ն տարօրինակ աւիւնով մը, որ պզտիկը չէր կրնար զինքը համբուրողներուն զիմազծութիւնները որոշել, ու չէր կրնար տեսնել մայրը, որ սեւերես մուշտակի մը մազոտ օձիքներուն մէջ պահած իւր գէմքը կ'արտասուէր դառնագին, հեկեկանքները իւր

գաւկէն չը լսուելու ճիգով հեղձամղձուկ:

Երբ պզտիկը այդ կրակի պէս տաք համբոյրներուն տարախէն ազատեցաւ, դարձեալ մօրը քով վազեց, ու կոնակը մօրը տուած՝ շուրջը սկսաւ դիտել պահ մը, իւր բոլորտիքը տեսած գէմքերուն արտայայտութենէն, այս տարօրինակ կացութեան շարժառիթը հասկնալու համար դուցէ:

Ու ապա մօրը դարձաւ իսկոյն, եւ երկու բազուկներովը մօրը վիզը շրջապատելով, անոր ականջը իւր շրթունքներուն մօտեցուց, որպէս թէ գաղտնի բան մը ունէր գրուցելիք ու պաշտելի միամտութեամբ մը հարցուց.

—Ո՞ւր է հայրիկս:

—Երուսաղէմ գնաց, տղաս, ըսաւ մայրը:

—Երուսաղէմ գնաց մի, յարեց պզտիկը ինչու մով, ըսելէ քի ըռըցաւ . . . :

—Ըռըցաւ . . .

—Գիտե՞ս, մայրիկ, շարունակեց տղան ուրախութենէն մօրը վիզը թողլով, եւ բարձրաձայն, այսօր «Տէր ողորմեա»-էն ատեն ես հայրիկիս ըռըգնալուն համար ազօթք ըրի ժամը . . .

Ի լուր այս խօսքին հեկեկանքներու խուլ

ժխոր մը փրթաւ սենեկին մէջ, տեսակ մը պայթիւն զսպուած հեծկլտուքներու: Այլ մայրը վերջին ճիգ մըն ալ ընելով զսպելու այն ազելարչ դառնութիւնը, որ տղուն գալէն ի վեր աւելի քան երբէք սաստկացած էր՝ յարեց.

—Վաղն ալ. տղա՛ս, գնա՛ ինձի համար ժամը ազօթք ըրէ, որպէսզի քեզ կարենամ մեծցնել մինակս . . . :

1893 Փետրվար 4





ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՍՐՏԻ ՄԸ ՎՐԷԺԸ (C)

Ընդ երկար մինակ մնաց Երուանդ իւր սենեկին մէջ, որ պարապ էր եւ ախուր՝ ինչպէս իւր սիրտը: Ու իր մենութեանը մէջ, կեանքի ամենէն հզօր արցունքները հոսեցան իւր սեւորակ աչքերէն, ահեղ պատրանքի մը յորդութեանը տակ ըզկտուած սրտի մը արիւնի աղի կաթիլներ, բաժնուած հիմայ իրենց ախուր երանգէն:

Շարունակութիւնն է սսիկայ, «Խորսակուած արտի մը» պատմութեան՝ գոր Տ. Սաեփսթ. Կեօզիւրեան գրած էր «Ճերիսէի» մէջ:

Երուանդ սիրահարուած է Հրակոյճին, որ քերէ բարձր աղջիկ մըն է. Վահրաւ, Երուանդին մտերիմը, հետոս արսիւղ ուզած է իւր բարեկամը այդ քերէաբարոյ աղջկան յարստերութենէն. Երուանդ չէ հաւնողուած սսիկայն իւր մտերմին խօսքերուն:

Վահրաւ, որ մը, վերջին միջոց մը կը խորհի Երուանդը փրկելու համար: Հէտը առնելով զայն կը սսնի Թեփէ պաշիի պարտեզը.

Ս.յդ վայրկեաններուն մէջ, երբ վիշտը, ահաւոր եւ անհունօրէն անողօք, չը տկարացած երբէք Վահրամի ամօքիչ խօսքերէն, իւր խուլ եւ ահուելի շրջանները կ'ընէր անոր թարմ գոյութեանը մէջ, ինչպէս փոթորիկը՝ շուշանի արտի մը մէջ, այդ վայրկեաններուն կ'ըղձար, իւր անսահման պատրանքին ամբողջ ուժովը կ'ըղձար որ, հեռքն՝ այն առաջին՝ այն միակ համբուրին, զոր այնքան դողդոջուն եւ այնքան երջանիկ՝ իւր շրթները քաղած էին անոր այտէն, իրենց տեսակցութեան առջի օրը, խարան մը ըլլար հիմայ,

որ քիչ մը վերջը կ'երեւայ Հրակոյճ Գեղաւ ակունն երիտասարդի մը քեր: Հրակոյճ չի նշխարեւ Երուանդը. այնքան՝ գրաւած է իւր նոր սիրահարով: Կը պսփն, կը հետսան. Վահրաւ Երուանդին հետ այդ զոյգին կը հետեւի, միևնչեւ ակունց ակերտութեամբ ծառերուն ետեւ. այն ասեւ Վահրաւ ու Երուանդ կը շտեն հաւրոյրներու ձայնը՝ Հրակոյճին Գեղաւիկն հետ փոխանակած:

Այն ասեւն միայն Վահրաւ կը հաւնողուի իստուր ճշմարտութեանը, որ իրեն պատրանքի մը բոյր սուր ցաւերը կ'առնի:

անաւո՛ր, սե՛ւ, լա՛յն խարան մը անոր թաւշի նման այտին վրայ, յար այրող եւ ընդ միշտ իւր վշտին, իւր անէծքին սոսկումը պահող հոն:

Օրեր անցան, վիշտը անփոփոխ մնաց իւր սաստկութեանը մէջ. միայն պարտասած, երբեմն քնացաւ անիկայ, իւր ամէն մէկ զարթումին անեղ գալարումներ տալով սակայն իւր զգացումներուն:

Երուանդ իր վշտին այդ դառն զարթումներուն պահուն խորհեցաւ տեսնել Հերանոյշն ու անոր սրտին մէջ, անոր գոյութեանը մէջ թափել լեցնել, անոր խոստմնադրժութեան ամբողջ մթութիւնը, իւր սրտին բոլոր դառնութիւնը, ու ամեն<sup>3</sup>արհաւրալից նախատինք, զոր իւր զայրոյթը տուն կուտար մտքին:

Ու անսանձ ո՛ւ մոլեգին դուրս կը նետուէր ամեն անգամ սենեակէն, տունէն, ու յիմարի մը հուժկու քայլերովը փողոցներուն մէջ կը վազէր, անոր տունը շուտ հասնելու համար. սակայն ամեն անգամ ալ, մաքուր օդին առատ թթուածինը, երկնքին պայծառութիւնը, սիւքին զովութիւնը, անցորդներու տեսքը, իւր յանդուգն գաղափարներուն աստիճանական մեղմացում մը կուտային, եւ ասպա

քոլորովին փոփոխում մը. այնպէս որ՝ շանթի մը պէս տունէն դուրս նետուող հէզ երիտասարդը, վերջալոյսի պահուն դանդաղօրէն քաշուող արեւի տխուր ճառագայթի մը պէս տուն կը մտնէր, մտազբաղ, մեկամաղճոտ եւ անզիտակից, տարտամ փոփանքով մը լեցուած:

Իւր վիշտը ոչ ոք զիտէր որոշակի, բացի Վահրամէն. տունինները եւ ամբողջ ծանօթները գուշակել սկսած էին սակայն բան մը այդ գէմքէն՝ որ յանկարծապէս մթագնութիւն մը ունեցած էր, իւր բարքէն՝ որ տխուր դիւրագրգռութեան մը ցայտումները կուսննար յաճախ:

Վահրամ ի տես իւր մտերմին այդ մեծ ստառպանքին, զոր ի զուր չէզօքացնել ուզած էր իւր մտերմութեան ամբողջ կորովովը, իւր ամենէն անոյշ բառերովը ու իր ամենէն ջղուտ նախադասութիւններովը, իրապէս կծու խղճահարութիւն մը կ'ունենար, քանզի վերջապէս ինք պատճառեր էր զայն:

Վահրամ, իւր մտերմին սրտին բուժումի գործողութիւնը յաջողցնելու համար, անոր ծնողքը օգնական առաւ իրեն, գաղտնապէս անոնց իմացնելով այն դժբաղբութիւնը, որ

իրենց միամօր զաւելին կեանքին սպառնալու ընդթը կըստանար հետզհետէ:

Այս երեք սրտերու միացած գորովն ալ սակայն ոչինչ կըցաւ ընել այն միակ գորովին զէմ, որ պատրանքի հրդեհին մէջ կ'այրէր, կը տոչորէր, յուսահատութեան մը թին ծուխովը հեղձամղձուկ ընել ուղեւով Երուանդի առոյգ ու այնքան թարմ գոյութիւնը:

—Ո՛չ կը խորհէր Երուանդ, չէր կրնար մը խիթարուել երբէք. ու անոնց մխիթարական սիրազեղ ձայներուն մէջէն որոշակի լսել կը կարծէր, այն յաւէտ անիծեալ օրուան, ախուր զէպէն առաջ, Քէմանի Թաղէոսի մեկամաղձիկ մէկ հիմազը:

Տիւնեասէ կհօնիր շարհսիկէ ջարհ պուշունակ:

—Ո՛չ, անողուտ էին ամեն խօսք, ինք անսահմանօրէն սիրած էր անիկայ, իւր սրտին բոլոր սրբութեամբը, իւր ամբողջ կեանքովը, պատրանքն ալ, վիշտն ալ, անսահման եղած էին հիմայ իւր մէջը:

Ի՞նչ ըրեր էր անոր, այդքան ուժեղ հարուած մը ընդունելու համար իրմէ. ինքնաբերաբար չէ՞ր որ «մէկ ակնթարթի մէջ

պարտէզին դուռն էր բացեր ու ներս էր առեր զինքը» եւ «կէս բաց կէս խուփ կուպերուն տակէն անոյշ նայուածք մըն էր արձակեր վրան, նայուածք մը անճառ, հրեշտակային, եւ այդ վայրկեանին արտասաներ էր այն բառը, որուն այնքան անձկութեամբ կը սպասէր ինք» կը սիրե՛մ զքեզ . . .

Ո՛հ, խածատելը կուգար հիմայ զանիկայ, զիշատելը, բզիկ բզիկ ընելը անոր սիրաւ, անոր անգո՛ւլթ, աղտո՛տ, անհօգի սիրաւ:

Գեղա՛մը սիրել իրեն տեղ, իրեն սէր խոստանալէն վերջը: Գեղա՛մը, զե՛վզե՛կ մը՝ իւր փողկապէն սկսեալ մինչեւ ոտքին ծայրը. սալայատակներու վրայէն սահող ջուրի տարածուն գիծերու պէս թեթեւ այդ սալալատակներու փայլը, սեւ պօնժուռով այդ ոչնչութիւնը, սին զլխով ու կեղտոտ սիրտով այդ հագուած աղբը մարդկութեան, իւր ձպիկին պէս վտիտ, նիհար, իւր կօշիկներուն պէս զեզին, անզգայ, անզօր հիւլէներու այդ ճղձիմ զանդուածը:

Անիկայ սիրե՛լ . . . :

Եւ անոր համար . . . այո՛, անոր համար — հիմայ կը սկսէր գուշակել, — որ պարզապէս պօնժուռ էր հագեր, ոչ թէ իրեն պէս ժափեթ

մը. կարմիր մետաքսէ փողկապ մը ունէր անի-  
կայ, վրան՝ աղամանդէ գլուխ ունեցող զըն-  
տասեղով մը փայլուն, մինչդեռ իրենը, պարզ,  
սեւ, նեղ ժապաւէնէ վզի կապ մըն էր.  
անիկայ՝ օսլայագօծ, սպիտակ շապիկին  
կուրծքին վրայ փայլող սակի կոճակներ կը  
կրէր, մինչդեռ իրեն ունեցածը սովորական  
սակրէ շինուածներ էին՝ դեղին գրեթէ. ու յե-  
տոյ, նուրբ, դեղակերտ չլթայ մը ժամացոյցի,  
որ գրպանէն կախուած, անգրպատմական սակի  
կեղծ գրամի մը խոշորութիւնը կը ճօճէր  
բաճկոնին սեւ փափօնէ յին վրայ, մինչդեռ  
իրեն ժամացոյցինը սեւ երիզ մըն էր, կոճա-  
կին ծակէն անցուած:

Այո՛, հիմայ կըմբռնէր իրեն եղած այդ լը-  
քումին, խաբկանքին շարժառիթը. կանացի  
ձգտումը անիկայ, ձեւին, շողշողունին,  
գրամին ուղղուած: Իւր սէրը, մեծատա-  
րած, անբիծ, նսեմացած էր անշուշտ Հերա-  
նոյչի գաղափարին մէջ, Գեղամի փողկապին  
վրայ շողացող աղամանդի, թերեւս բծաւոր,  
այդ փոքր կտորին քով. ու իր անկեղծու-  
թիւնը, հսկայ ինչպէս իւր սէրը, տգեղ ու  
թղուկ մնացեր էր թերեւս, Գեղամի կեղծիք-  
ներով վարդագոյն բառերուն մօտ:

է՛ն, անմիտ աղջիկ, ինքն ալ բարեկեցիկ  
չէ՞ր միթէ, եթէ լաւագոյն կերպով չէր հազ-  
ուեր, պատճառն այն էր որ պարզապէս պար-  
զութիւնը կը սիրէր. ու թերեւս աւելի հա-  
րուստ էր Գեղամէն. եւ սակէ զատ, թէպէտ  
4—5 տարիէ ի վեր դործի սկսած, սակայն  
այժմէն ապահով ապագայ մը վերապահուած  
ըլլալն իրեն՝ յստակօրէն կը նշմարուէր ար-  
դէն. ու յետոյ, հապա հօրը հարստութիւնը,  
որ միայն իրեն պիտի մնար օր մը . . . :

Ո՛չ, ո՛չ, այդ ստորին էակէն, այդ կիներու  
է՛ն ցածէն վրէժ լուծել կուզէր հիմայ. իւր  
սէրը անարկու ատելութեան մը փոխուեցաւ  
խակոյն:

Ո՛լը, գոր կը զգար իւր խորտակուած սիր-  
տը, իւր սիրոյն պէս անծիր էր ու անոր չափ  
մեծ:

Այլ իւր մտքին ամբողջ մեքենան լարած,  
իւր վրէժը լուծելու միջոց մը կը ջանար  
գտնել:

\* \* \*

—Աղջիկ մը գտնելու եւ կարգելու է Եր-  
ուանդը. խորհեր էր ռամիկ հայրը, իւր գաւ-  
կին անխօսուկ, անմխիթար տառապանքէն

սարսափած, իբր միակ բուժողւմ անոր. է՛ն հին արեւելեան ընտանեկան դեղը խորտակուած սրտերը վերանորոգելու: Ու մայրն այս խորհուրդը լաւ էր գտեր, եւ վահրամ՝ նըշանակալից հանգամանքով գլխու շարժում մըն էր ըրեր՝ իբր իւր կողմանէ քուէ:

\* \* \*

Երկու ամիս վերջը, Թաղապետական պարտէզին դէպքէն ի վեր, Երուանդ իւր գուարթու թիւնը վերստացեր էր՝ առջինէն աւելի գուա՛րթ ու աւելի ալ գեղեցիկ. միայն երբեմն, իւր առանձնութեանը մէջ, մտախոհութիւն մը կուեննար, որ սակայն շուտ կ'անցնէր. ինչպէս պզտիկ թեթեւ ամպ մը երկնքի պայծառութեան վրայէն:

Երուանդ շիք, փայլուն երիտասարդ մըն էր եղեր, իւր բաց կապոյտ մետաքսահիւս փողկապը՝ աղամանդազարդ գնդասեղ մը կը կրէր, զոր տասն երկու ոսկի կարժեցնէին իւր բարեկամները, իւր պօժժուրը Միտին կարեւր տուած էր, ձեռնոցները՝ պիղօւսփ, շատ քիչ անգամ ցոյց կուտային՝ իւր մանր, ձեւաւոր, գիրուկ ձեռքերը, կոշիկները, յուսուին, պզտիկ, աղջկան մը ոտքերուն փափկութիւնը

կը կաղապարէին:

Բարեփոխուած էր Երուանդ իւր արտաքին երեւոյթով՝ ինչպէս եւ ներքինով: Խելիսօլ երիտասարդ մը՝ որ սպիտակ, գեղեցիկ մըտուկի մը վրայ նստած, անոր հոգմածածան բաշին ելեւէջերուն մէջ իւր կուրծքն ընդառաջ, արշաւներ կ'ընէր փողոցներուն մէջ, եւ երբեմն, աշնանասկզբի զեփիւռին դէմ, բաց շունօյի մը մէջ ընկողմանած, անոր արազավազ գնացքովը պտոյտներ կ'ընէր թաղերու մէջ ու դաշտերը: Ու աւելի զարմանալին, գիշերները, հետիոտն, Հերանոյշի տան պարտէզին դրան առջեւ անոր թափառումը կը տեսնուէր, մինչեւ պարտէզին ամբարակ դրան ետեւէն գուարթ Ֆրուֆրույի մը լսուիլը, դրան բացուիլը, ու Հերանոյշի խնձկալից աւիւնով կարմրած այտերուն, եւ նուրբ, ճապուկ հասակին երեւումը:

Հերանոյշ, ինչպէս չէ մոռցուած անշուշտ, Թաղապետական պարտէզին մէջ, այն գիշեր Գեղամին հետ փոխանակած տաք համբոյրին ատեն, թէպէտ խիստ մօտէն ձայն մը լսած էր, բայց երբէք չէր գիտցած թէ՛ ինչ էր այդ ձայնը. եւ քանի որ գործը զոնգ բռնող էր, Հետեւաբար, երբ մէկուկէս ամիս վերջ Եր-

ուսանող երեւան ելաւ—իւր բաւական ատենի  
բացակայութեանը համար, համոզիչ սուտ մը  
չի ներլով—մանաւանդ հիւսնալիօրէն շիք հագ-  
ուած ու սքռած, անոր հետ շարունակու-  
թեան մէջ դրաւ իւր անամօթ կատակերգու-  
թիւնը, աւելի բուռն եւ անկեղծերեւոյթ  
արտայայտութիւն մը տալով իւր զգացում-  
ներուն, ու այս անգամ այնքան շրջուցիչ  
երեւցաւ իրեն Երուանդ, որ պարզապէս երեսէ  
թողուց Գեղամը, որ ոչինչ զգաց այս լքումէն,  
որովհետեւ չէր սիրած զայն բնաւ: Ու Հե-  
րանոյշ միմիակ խորհուրդ մը ունեցաւ՝ Եր-  
ուանդի շտապ ու մեծախարթամ արդուզարդը,  
զուարճութիւնները տեսնելով, կիներու մի-  
ակ, առաջին, սովորական, ռամիկ խորհուրդը.  
վերջնականապէս իրեն գերի ընելով զայն՝  
ամուսնանալ հետը, եւ այս՝ կարելի եղածին չափ  
չուտ:

Ու Երուանդ բնաւ օր մը չը յայտնեց իրեն,  
ահաւոր կսկիծը, զոր տուած էր իրեն Հերա-  
նոյշ, ու ոչ ալ, իւր գիշերային խորհրդաւոր  
այցել: Ինչպէս միջոցին, Գեղամի անունը ար-  
տասանեց: Ու ամէն անգամ այնքան զգած-  
ուած, այնքան երջանիկ, այնքան հմայուած  
երեւցաւ Հերանոյշի առջեւ՝ անոր նայուած-

քին, ձայնին, աղւորութեանը մագնիսացում-  
ներէն, որ Հերանոյշ իւր նպատակին հասնելու  
խիստ մօտ կը կարծէր ինքզինքը, թէպէտ  
բնաւ չէր եղած բոպէ մը՝ որ սէր զգացած  
ըլլար:

Գիշերները, Երուանդ, ընդերկար կը մնար  
Հերանոյշին քով, կորուսած կարծես իւր ան-  
հատականութիւնը՝ անոր ազդու եւ յորդ հը-  
րապոյրին առջեւ. սակայն ամէն անգամ,  
մթնուն, երբ մեկնէր անոր քովէն, լուսնի  
աղօտ ճառագայթ մըն ալ պիտի բաւէր լաւ  
գիտող աչքի մը ցոյց տալու անհուն գարշան-  
քով ծամածուռ իւր դէմքը, այնպէս, ինչպէս  
մարդ կ'ունենայ, երբ իրեն տրուած անա-  
խորժ, դառն բան մը տգիտութեամբ բերանը  
առնելէն վերջ, առանց կարենալու նողկանքը  
յայտնել՝ քաղաքավարութեան դէմ չը գործե-  
լու համար նոյն իսկ ժպտուն դէմք մը կ'առնէ,  
եւ առանձին մնացած պահուն բերնէն դուրս  
կը նետէ զայն, շրթունքներն անօրինակօրէն  
վեր դարձած ու դէմքին գիծերը, զըզուանքէ  
ամբողջ տգեղցած երեւոյթով մը:

\* \*  
\*

—Ոչ, գիտես որ, Հերանոյշ, կը պաշտեմ՝

գլքեզ, առանց քեզի չպիտի կրնամ այդ երեկոյթն անցընել, օտարներու հետ մանաւանդ, •  
 քոքեզ, անշնորհ, անհրապոյր աղջիկներու մէջ, որք այնքան շատցած են հիմա, գլքեզ սիրելէս ի վեր: Ոչ, ոչ, դուն ինձմէ հեռու եւ ե՛ս ուրիշներու քո՛վ . . . ոչ, այս անկարելի է, հոգեվարք մըն է այս ինձ համար . . . ոչ, անպատճառ գալու ես. . . : Ես քու քովդ միայն կրնամ ապրիլ, իմ ամբողջ կեանքս ես դուն, աշխարհիս մնացած աղջիկները միանալով չեն կրնար բնաւ քու հրապոյրդ ունենալ, քու մէկ նայուածքդ, քու ձայնիդ մէկ թըրթուումը, քու մէկ մատիդ իսկ երանգը, անօրինակ՝ անեղական է: Ու այնքան կը սիրեմ գլքեզ, Հերանոյշ, ու այնքան քեզմէ հեռու չեմ կրնար ապրիլ, որ որոշած եմ քեզ ամուսնութեան խնդրել մօրմէդ. . . : Արդէն խօսք բացած եմ իմ մօրս. . . :

—Մօրդ խօ՛սք բացած. . .

—Այո՛, սակայն դեռ չեմ տուած անունդ, կուզեմ որ՝ իրենց երեւակայութիւնը քու մտացածին պատկերովդ չը պաշարուած, գլքեզ տեսնեն քու հրապոյրիդ բոլոր շողիւնովն ու աղբորութեանդ ազդու հիացումովը, եւ չիտակը, ճիշդ ասոր համար է որ քու ներկայու-

թիւնդ կուզեմ այդ երեկոյթին. . . ասիկայ դարավերջիկ աղջիկտես մը պիտի ըլլայ, այնպէս չէ՞. գլքեզ թեւս առած մօրս ու հօրս պիտի ներկայացնեմ. որքա՛ն պիտի սիրեն արդեօք քեզ. իրենց կեանքին մէջ առաջին անգամն ըլլալով պիտի տեսնան իրական բացարձակ գեղեցկութիւն մը. գեղեցկութիւն մը որ քիչ օրէն իրենց հարսը պիտի ըլլայ. . . : Այդ երեկոյթին մէջ քու թողելիք տպաւորութեանդ մտածումն իսկ, հիմակուրնէ անսահման հպարտութեամբ կուռեցնէ կուրծքս. . . պիտի գաս, այնպէս չէ՞, Հերանոյշս, պիտի գաս. . . :  
 —Գիտես որ Երուանդ, ոչինչ կրնամ քեզ մերժել. . . :

Ու այս երիտասարդները, հրապուրիչ, բուռն սիրազեղ գիրկնդխառնումով մը վերջակէտեցին իրենց խօսակցութիւնը ու պարտէզին մէկ մութ անկիւնը, տերեւներու շոյափիւնին մէջ՝ գիշերուան հովէն առթուած՝ կորսուեցաւ իրենց համբոյրին կրակոտ շաչիւնը. . . :

\* \* \*

Ծնունդին առջի գիշերն էր:

Ձիւնի խոշոր հատիկներ իրենց դանդաղ երեւէջներովը կը պարէին բաց օդին մէջ:

Գասպար աղայի տանը մէջ, գունազեղ երկսեռ բազմութիւն մը, թաղին հայ-չայֆը ամբողջ, զւարթութեան անօրինակ ցայտում մը կը սփռէր. դահլիճներու, սենեակներու, նրբանցքներու մէջ անոյշ բուրում մըն էր տարածուած օքօքօնաֆսի եւ հլիօքօքի: Գաղջ մթնոլորտ մը հեշտ մեղկութիւն մը տուած էր ջիղերու, եւ այտերու՝ վարդի գոյն մը հիանալի. հօլանի թեւեր կաթնաթոյր, բաց կուրծքեր, փափուկ՝ սպիտակ՝ ականակուռ մանեակներ, շողողուն ապարանջաններ, յետոյ, ծիածանի բոլոր գոյներովը լայն ժապաւէններ, նեղ մէջքերու վրայ ամիոփուած ճաշակաւոր վարդաձեւներով, ու պատերուն վրայ մեծածաւալ հայելիներ, ու լայն ոսկեղօծ շրջանակներ՝ արհեստական գեղեցիկ դըրուազներով, առաստաղէն վար կախուած ջահերու անհամար լոյսերուն մէջ, ակնապարար լուսափայլում մը ունեցած էին, որ աննկարագրելիօրէն հիանալի էր:

Գաշնակի մեզմ ձայն մը, մերթ ընդ մերթ լսուած, այս գուարթ, խուլ խժղուկին մէջէն, կատարեալ կ'ընէր նախնական տղաւորութիւնը այս երեկոյթին, զոր Գասպար աղա, հարուստ հաստեթառու մը, այնքան խնամքով

պատրաստել տուած էր իւր անունին տօնախմբութեանը առթիւ:

Հրաւիրեալները եկած էին, ամենքն ալ գրեթէ, հոն էր նաեւ Հերանոյշ իւր մօր ու հօրը հետ:

Հերանոյշ իրեն տարեկից աղջիկներու խմբակի մը հետ խօսակցութեան զբաղած էր, բայց ատենէ մը ի վեր մոտատանջութեան մը կծկումները կը նշմարուէին իւր գէմքին վրայ, եւ հակառակ կարի զուարթ իւր խօսուրուտութիւն, ձայնին մէջ բարկութեան եւ անհամբերութեան եռք մը, պզտիկ թրթռում մը կար, եւ նայուածքին մէջ՝ փոքրիկ տարտամ վայրագութիւն մը:

Կէս ժամէ ի վեր Երուանդ իւր ծնողքին հետ սրահը մտեր էր, ու շուրջն առանց նայուածք մը իսկ շրջեցնելու, խօսակցութեան մը սկսեր էր, գրեթէ իսկոյն, անծանօթ աղջրկան մը հետ. արեւի մը պէս խարտեաչ, գեղեցիկ աղջիկ մը, որ շիկնոտ եւ կարի հրապուրիչ չարժումներով կը մասնակցէր խօսակցութեան: Հերանոյշ տեսած էր Երուանդին մուտքը, ամենուն անտարբեր իւր գիրքը, ու խօսակցութիւնը այդ աղջկանը հետ, ու յետոյ, իւր ընկերուհիներէն բաժնուած, դիտել



սկսաւ ուշադրութեամբ Երուանդն ու դեղին մազերով ձերմակ այդ ազլիկը, ու անոնց խօսակցութեան մէջ պատշաճութեան սահմաններէն ալ դուրս ելած մտերմական ձեւեր նշմարել կարծեց ազօտ դառնութեամբ մը, սակայն ոչինչ անցընել ուզեց միտքէն: Վայրկեանները կը սահէին, ու դեռ չէր դադրեր ատոնց խօսակցութիւնը, որուն մերթ Երուանդին մայրն ալ կուգար խառնուիլ յայտնապէս գորովալից շարժումներով:

Հերանոյշ, իւր այս տեսակ մը լքումին համար, որուն չէր բաղձար վայրկեան մը իսկ համոզուիլ, կ'զգար թէ զայրոյթը, նախանձը անօրինակ եռուզեռում մը կը ստանային հետզհետէ իւր մէջ, ու անհամբերութիւնը կը ձանկոտէր իւր կուրծքը: Տասը տեղ փոխեց, ու հպարտ յամառութեամբ մը սպասեց Երուանդին, որ պիտի գար զինքը իր ծնողացը ներկայացընելու. . . :

Երուանդ կ'ուշանար գալու:

Եւ ահա դաշնակը՝ անկիւն մը գրուած՝ յորդահոս ներդաշնակութեամբ մը գասրիչի եռանդոտ հրաւէր մ'ընել սկսաւ :

Երուանդ ու իր խօսակցութեան իսկոյն իրենց տեղէն ցատկեցին ու պարին մէջ իրենց տեղը

որոշեցին. . . բոլորովին իրարմով զբաղուած սակայն, ու անուշազիր ամեն անոնց, որոնք իրենց շուրջը կարգեր ու տեղեր կ'ընտրէին զուարթ ներդաշնակ պոռչըտութենքերով:

Հերանոյշ չէր ընդունած ոչ ոքի պարի հրաւէրն. առանձին էր: Ա՛լ անտանելի էր ասիկայ. դեռ ականջին մէջ էր երկու դիշեր առաջուան Երուանդին խօսքերն, անոր պազատանքը, սէրը, խանդը, ի՞նչ կը նշանակէր անոր հիմակուան այս կացութիւնը: Ներքին կարի արծարծուած կրակի մը ցոլքերուն տակ իւր այտերն մանիշակագոյն ըլլալու չափ կարմրած էին. երակներուն մէջ կծու հոսանքի մը շրջանը կ'ըզգար. ու շրջազգեստներու շփումները, ոտքերու կանոնաւոր օրաթիփրտուքը, սիրիմեռոն սուր ձայնը, բոլորն ալ պարէն արտադրուած, ջղասարսուռ տագնապով մը իւր էութիւնը կը խածատէին. ու վայրկենէ մը ի վեր արիւն լեցուած իւր աչքերը կը գոցէր, չտեսնելու համար այն զոյգը, այնքան փափկութեամբ իրարու փաթտուած, որքան այգածաղիկի երկու քնքոյշ ցօղուններ:

Պարը աւարտեցաւ: Ու Երուանդ՝ կարի փափկանկատ մեծարանքով մը՝ իւր պարակ-

ցուհին տեղը կը նստեցնէր, երբ Հերանոյշը նշմարեց, վերաւոր եղնիկի մը պէս վայրենի, կարմիր՝ արհաւրալից նայուածքով, որ առանձին թաւշեպատ թիկնաթոռի մը մէջ ընկողմանած էր:

Երուանդ՝ հին մտերիմ մը տեսնող մարդու մը չափ ուրախ, եւ աւելի ուրախ բոլոր այն մարդիկներէն, որոնք յոգնեցուցիչ ու անձկալիւր սպասուած նպատակի մը կը հասնին, իւր պարակցուհին թեւն առնելով, գրեթէ քիչ մը բռնի քաշելով զայն, Հերանոյշի մօտ գնաց:

Հերանոյշ դէպքին այս ձեւէն, որ երկնաքարի մը պէս անակնկալ էր, այլայլմէ եղած՝ ոտքի ելաւ զանոնք ընդունելու. ու վայրկեան մը, զարմանքը, զայրոյթն ու բռնի կեղծաւոր ժպիտ մը իրար խառնուած՝ անսովոր արտայայտութիւն մը տուին անոր դէմքին:

— Դուք հո՞ս, օրիորդ. . . մինչդեռ ես բաւական ատենէ ի վեր ձեզի կը փնտռեմ, ձեզի ներկայացնելու համար. . . նշանաձրս. . .

Վայրկեաններ կան, ըսուած է, որ երկիրը խոյս կուտայ մարդուն ոտքին տակէն, ու երկիրնքը կը փլի:

Երուանդ դեռ խօսքը չաւարտած, Հերա-

նոյշ թիկնաթոռին մէջ ինկաւ, տժգոյն, շանթահարուած. միակ բառ մը ունենալով իւր վայրագօրէն սեղմուած ակօսներուն մէջ. խուլ, անլսելի, առիւծի մռնչիւն մը.

— Վա՛տ. . .

— Մեր նշանախօսութիւնը շատ հին բան է. այնպէս որ, ազնիւ բարեկամուհիս, շարունակեց Երուանդ անգութ ու անտարբեր ծիծաղով մը, զայս հիմայ ձեզ իմացնելու համար՝ բնաւ չեմ կարծեր որ վշտանալու իրաւունք մը ունեցած ըլլաք. . . : Գրեթէ երկու ամիսէ ի վեր. . . թաղապետական պարտեզին մէջ մեր հանդիպումէն ի վեր. . . ծառերուն ետեւ. . . Գեղամին հետ. . . :

Յունվար 14 1894



## ՈՒՇ ՄՆԱՑԱՍ

Կեանքիս մէջ ունեցած զարմանքներուս էն մեծն էր այն զոր Արթաքի աղային ամուսնութեան լուրովն ունեցայ: Այդ լուրն անոր համար այնքան մեծ զարմանք մը առթեց ինձ, որովհետեւ Արթաքի աղան՝ ա՛լ վաթսուներն մօտեցած էր տարիքով՝ եւ երեւոյթով եօթանասունն իսկ անցած, եւ ասկէ զտո, այն կիսն, որուն հետ ամուսնացեր էր, ա՛լ պառաւ մըն էր քթան մագերով եւ չորցած այտերով: Երկու աշնանաւերջերու ամուսնութիւն ասիկայ, որ, խոստովանեցէք թէ, ամեն մարդու տրուած չէ իմանալ: Արդ, բընական ըլլալով զարմանքս, բնական էր նաեւ որ, նոյն իսկ իրմէ իմանայի՝ թելադրիչ պատճառն իւր այս ընթացքին, զոր շատեր սկսած էին այգանելի գտնել, այն յանցանքով միայն որ, ո՛ւշ էր մնացած: Եւ կրնայի ալ գոհացնել հետաքրքրութիւնս, քանի որ իրեն նկատմամբ ունեցած սիրազեղ յարգանքս՝ բարեկամական մասնաւոր համակրանք մը ծնուցած էր իւր մէջ՝ ինձ համար. բան մը

ասկայն, անցողաբար, որ չեմ գիտեր ինչո՞ւ չէր կրցեր զօրել իւր հարսնիքին զիս հրաւիրելու, ինչ որ բաւական վիշտ առթեց ինձ, հակառակ իմանալուս թէ, աշխարհիս ամենէն պարզ հարսնիքներէն մէկն է եղեր զոր կատարեր է՝ իւր թաղին եկեղեցւոյն մէջ երեք հոգիի ներկայութեան, քահանան, լուսարարը եւ կնքահայրը. տխուր հարսնիք մը, յուզարկաւորութենէ մը աւելի տխու՛ր, պսակն օրհնող քահանայիս բառովը:

\*  
\*  
\*

Քովէ քով էին Արթաքի աղային հօրը եւ Քրիս աղային տուները: Առջինը ոսկերիչ էր եւ վերջինը՝ սեղանաւոր, հետեւաբար երկուքն ալ բարեկեցիկ ընտանիքներ այն թուականին, երբ Արթաքի 12 տարու էր, էն պղտիկն իւր հօր հինգ զաւկներուն եւ մէկ հատիկ ալ մանչը, եւ Վարդուհի 10 տարու, Քրիս աղային երեք աղջիկներուն փոքրը, անոյշ նայուածքով կարճազգեստ խարտեաչ մը սիրուն, գողտրիկ, վարդագոյն դիմագծերով:

Այս երկու տուներուն եօթն աղջիկները եւ մէկ մանչը, թխորակ մանչ մը, ածուխի պէս

աչքերով ու յոնքերով. կայտառ, եւ գեղեցկութեան մօտեցող սիրունութեամբ մը իւր այտերը լեցուն. ամառ իրիկունները, դպրոցէ վերադարձին, պարտէզը կը ժողուէին, որ երկու տունին ալ հասարակ էր, եւ հո՛ն, ծառերու տակ, կանանչ խոտին վրայ, կամ ձմեռ գիշերները՝ երկու ընտանիքներու իրարու այցելած պահուն, սենեկին անկիւնը, իրենց ծնողքէն հեռու, տղու այն հազար ու մէկ խաղերը կը ստեղծէին, զուարթ, անդիտակ, խօլ պոռչաուքներով լեցուն այնքան, որքան անիմաստ անոնք իրենց կազմութեամբն եւ անանուն:

Երկնքի տակ գտնուած, ամենէն անբիծ, ամենէն ճշմարիտ եւ ամենէն ալ երջանիկ վիճակը սակայն ատիկայ, որուն մէջ անմիջութիւնը զուարթութիւնը կը համբուրէ եւ սոցիալութիւնը երանութենէն կը գրկուի:

Արթաքի, իւր խաղերուն մէջ եւ ամեն առթի ալ մէջ շնորհալից եւ գորովալից հակում մը ունէր մասնաւորապէս վարդուհիի նկատմամբ, որ լաճախ նախանձ կ'առթէր միւսներուն, մասաւանդ այն ատեններն, երբ, չեմ գիտեր տղայական ինչ զիջողութիւններ կ'ընէր անոր եւ զայն կը պաշտպա-

նէր փոքրիկ անիրաւութիւններու, դէմ, որոնք իրենց խաղերէն ծնունդ կ'առնէին: Ու այս համակրումը կը փոխադարձուէր՝ վարդուհիի պզտիկ մօր մը գուրգուրանքովը եւ Արթաքիի՝ էրկան մը լուրջ պաշտպանողական գորովովը: Իրենց այս համակրումը, այս սէրը տղու, տարտամ, անսահման եւ անգոյն, հիանալի փափկութիւն մը ունէր, անդիտութեան փափկութիւնը եւ սրբութեան ալ փափկութիւնը:

Կը շարունակէին ամենքն ալ իրենց մանկական յարատեւ խաղերը՝ առանց վերջաբանի. վազվզուքները՝ անկանոն եւ փոփոխական, խնդալները անվերջ, ոչինչ ունենալով իբր մտածում բայց միայն իրենց խաղերուն սկար հանգոյցները, եւ իբր զգացում՝ զուարթութիւնը միշտ, անսահման եւ անըկարագրելի:

\*  
\* \*  
\*

Եւ ահա օր մը, այս բարի պզտիկները դադրեցան ա'լ իրարու հետ խաղալէ:

Արթաքիի հօր գործերը հախորդ էին դացած, խանութը գոցեր էր եւ տունը ստիպուեր էր փոխել: Արթաքիէնք, հեռաւոր թա-

դի մը մէջ, պզտիկ տուն մը վարձեցին, երկու սենեակով, ուր շատ զժուարութեամբ կրցաւ հայրն իւր ընտանիքն ապրեցնել:

Արթաքի եւ վարդուհի բաւական ատեն չը տեսան զիրար. օր մը, երեք տարի վերջ իրենց բաժանումէն, Արթաքի փողոցը հանդիպեցաւ վարդուհիին՝ մօրը հետ կառքի մը մէջ նստած սեւերով, ձմեռուան անհանդուրժելի ցիխոտ օրերէն մէկն էր այն օրը ու ցուրտ ալ, հազիւ կրցաւ նշմարել, կառքին ապակիներուն ետեւէն անոր ըղձալի դէմքը, ու վարդուհի չը նայեցաւ իրեն: Ու աղէկ որ չը նայեցաւ, պատուած կօշիկ մը հագած էր ինք ու պատուած ալ բաճկոճակ մը՝ ցուրտին դէմ անպատասպար, ինչպէս եւ գետինը լողացող ցիխին դէմ. կասկարմիր կերտեցաւ Արթաքի, երբ վարդուհին՝ սրարշաւ վազող կառքին մէջ նշմարելէն վերջ՝ իւր վըրայ նայեցաւ. աղքատի մը կերպարանքն ունէր, ամբողջ ցիխին մէջ թաթխուած, ու զարմացաւ որ մինչեւ այն ատեն չէր կրցեր նշմարել իւր անհունօրէն խեղճ անտանելի կերպարանքը, մինչեւ այն ատեն կոշիկներուն ծակերէն ներս անցնող ցիխոտ պաղ ջուրին ցուրտ տպաւորութենէն միայն զժգոճ էր,

հիմայ, իւր վրայ եղած ամեն բանէն ալ դըժգոճ մնաց, ու երբ կը խորհէր թէ՛ վարդուհին զինքը այս վիճակին մէջ տեսած կրնայ ըլլալ, ինքզինքը կտոր կտոր խածնելը, խեղդելը, մեռցնելը կուգար:

Այն օրուրնէ որոշակի տպաւորուեցաւ վարդուհիի դէմքը իւր պատանիի անփորձ մտքին մէջ, այն օրուրնէ, լուրջ տառապանք մը իւր զագիր, փշալից բոցը դբաւ անոր ձգձիմ եւ փափուկ սրտին խորը:

\* \* \*

Այն տարին, Արթաքի թողուց դպրոցն, ուր, բաւական կարգալ, գրել եւ հաշուել սորված էր, ու մտաւ խանութպանի մը քով:

Այն միակ մտածումը, զոր ունեցաւ գործի սկսելուն, զբամ շահելուն առջի օրէն, ձեռք մը շնորհքով զգեստ ունենալն էր: Այս մտածումը, հէք տղուն համար, իտէալ մը եղաւ ճիշդ երեք տարի, իտէ՛ալ մը, որուն ձգտեցաւ իւր զգացումներուն իւր եռանդին, իւր էութեան ամբողջ թափովը: Միշտ նոյն մտածումն էր որ իւր միտքը կը ճնշէր ինչպէս մամուլը երկաթի ձողը. ամեն տառու,

երբ շուկային դրան բացուելուն կը սպասէր, ամառները՝ քրտնած եւ շնչասպառ՝ Մանմուտ-Փաշային ցից զառիվերին վերելքովը, եւ ձըմեռները՝ բարակ, մաշած բալթոյի մը ծուէններուն մէջ ցրտասարսուռ:

Այդ երեք տարիներուն մէջ մեռած էր իւր հայրը, ու իրեն մնացեր էին մայրն ու երկու քոյրերը, ամենասարգահատելի աղքատ վիճակով մը: Սմբողջ վաստակը, նիհար ու աննշան, տուն կը տանէր, իրեն էն անհրաժեշտ ծախքերուն համար իսկ խիստ անբաւական մաս մը պահելով քովը, որով չէր կըրցեր երբէք ամբողջ ձեռք մը զգեստ ունենալ:

Երեք տարի վերջ Արթաքին՝ իւր վարպետը փոխեց, թէպէտ ճիշդն այն է թէ՛ վարպետն էր որ իւր աշակերտը փոխեց, անտանելի, ուամիկ, խանութպանի տիպար մը, որբարկութեան եւ ծայրագոյն անգթութեան վայրկեանի մը մէջ ճամբեց քովէն Արթաքին, որուն միակ յանցանքն այն էր որ խանութը մոռցեր էր վարպետին առջի օրը նոր կարկտել տուած կօշիկները, զորս պարտաւոր էր, գիշերը, անոր տունը տանիլ: Արթաքին այս հրաժարումը նպաստաւոր եղաւ սակայն իրեն, ուրիշ խանութպանի մը քով մտաւ, որմէ, առջի

անգամն ըլլալով, շաբաթական 50 դրուշանեկ սկսաւ:

Անչափ էր Արթաքին ցնծութիւնը:

Այն օրուան գիշերը, իւր տան դրացիներն, առաջին անգամն ըլլալով, անոր քահանայները ու քոյրերուն հետ զուարթ կատակներ ընելը իմացան, եւ բոլոր ասոնք նոյն շաբթուան վերջին օրուան գիշերն ալ իմացուեցան, աւելի բուռն եւ աւելի խանդալից, ու հետեւեալ առաւօտ դրանն առջեւ նշմարեցին—միշտ դրացիները—պիստակի բազմաթիւ խեճեպներ, ցիր ու ցան, տփգոյն դեղին երեսով եւ մանիշակագոյն կարմրորակ խոտոչով: Ա՛լ հաստատապէս մտադրեց, ինչ որ ալ ըլլար, քիչ մը դրամ պիտի աւելցնէր եւ ձեռք մը զգեստ պիտի գնէր: Եւ արդարեւ, նոյն տարուան Զատիկին, 120 դրուշով ձեռք մը բաց մոխրագոյն զգեստ գնեց, Մանմուտ Փաշայի այն մեծ խանութներէն մէկէն, որոնց լայն ցուցափեղկերուն մէջ, մեղկօրէն ու անտարբեր շարուած զգեստները ընդերկար զինքը տատապեցուցեր էին անիրականացած ըզճանքի մը սուր փուշերովը ճանկուտելով իւր թարմ գոյութիւնը:

Զատիկին առտուն, հագուած սգուած, երբ

Ֆէսը կաղապարել տալէ յետոյ, Ֆէսճիին խա-  
նութին մէջ կախուած լայնչի հայելիին մէջ  
նայեցաւ, ուր իւր մարմինը գրեթէ ամբողջ  
կը պատկերանար, սքանչացաւ ինքն իր վը-  
րայ. անիւրած—վասն զի ա՛լ սկսեր էր ա-  
ծիրուիլ—տոգոյն գէմք մը՝ որուն վրայ քիչ  
մը վարդի գոյն էր ցանցնած նոր լաթերուն  
առթած ուրախութիւնը, Ֆէսը քիչ մը քո-  
վնտի հակած, որուն եղերքը՝ թուխ ու ան-  
բիծ ճակատը վայելչօրէն կը գրկէր, յետոյ  
ժաքէղը վերէն վար կոճկուած, առանց փո-  
թի, ու շապիկը՝ վարդագոյն պասմայէ...  
է՛հ, չէ՛, իրաւ որ շատ բարեձեւ երիտասարդ  
մըն էր եղեր, գեղեցիկ ա՛լ, ա՛լ հիմայ տես-  
նել կուգէր Վարդուհին, ա՛լ չը պիտի ամբչ-  
նար իւր երեւոյթէն, որ նոյն իսկ կը հպար-  
տացնէր զինքը:

Նոյն օրը եւ յաջորդ օրը, փողոցը դացած  
ատեն, խանութներուն փայլուն ցուցափեղ-  
կերուն մէջ շեղակի նայուածք մը կ'ըզգէր  
իւր պատկերը տեսնելու համար, ու անձնա-  
սէրի անմլաս ուրախութեամբ մը կը լեցուէր  
իւր սիրտը. ու ա՛լ մօտ կ'ըզգար ինքզինքը  
Վարդուհին. ու մտքի տարօրինակ պատրան-  
քով մը, իւրաքանչիւր փողոց գտնուելուն,

ապահովապէս կը կարծէր թէ՛ դէմը պիտի  
եղնէ Վարդուհին, մօրը հետ, սեւերով, արա-  
գընթաց կառքի մը մէջ ընկողմանած:

\* \* \*

Վերջապէս տեսաւ օր մը Վարդուհին:

Մայիսի կիրակի մըն էր: Երկինք իր ա-  
մենէն ժպտուն եւ ամենէն հիանալի գէմքն  
առած էր այն օրը: Սմեն մարդ, թաղին գուր-  
սը գտնուած ծովահայեաց բլուրը կ'երթար  
պտըտելու: Ինքն ալ, առանձին հոն գնաց:  
Կիներու, աղջիկներու, մարդոց եւ տղաքնե-  
րու բազմութիւն մը լեցուած էր հոն, զուարթ  
բազմութիւն մը, բազմերանգ հսկայ ծաղիկ-  
ներու ցանցնուած մը հետուէն, որ բուրումի  
տեղ՝ քահքահներով եւ զուարթութիւն ար-  
տայայտող աղաղակներու ամեն ձեւերովը՝ օդը  
կը լեցնէր. ինքն ալ մտաւ այդ բազմութեան մէջ  
ու քիչ մը յետոյ, բլուրին առանձին մէկ կող-  
մը քաշուեցաւ, ու կանանչ խոտերուն վրայ՝  
մեղկօրէն եւ քիչ մըն ալ անպատկառ տարած-  
ուած, չորս կողմը դիտել սկսաւ՝ տխրութեան  
նման անորոշ զղացումով մը համակուած՝ քիչ  
մը հետուն եռացող այդ բազմութենէն: Մա-  
հաղիպիսի մը անցաւ քովէն, կեցուց զայն,

եւ առջի հեղ ըլլալով, ոչ նուազ խղճահարու-  
թեամբ, քսաննոց մահաշիջի մը կերաւ՝ շա-  
քարը շատ: Յետոյ ոտքի ելաւ, ու բլուրին  
այդ ամայի կողին վրայ, պտըտիլ սկսաւ  
դանդաղ քայլերով եւ տարտամ խոհերու մէջ  
կորսուած. ու այս՝ երկայն ատեն, այնպէս  
որ չլսեց իւր ետեւէն իմացող եւ հետզհետէ  
մօտեցող՝ կանացի նուրբ խնդուքներով  
խառնուած՝ երկու որոշ ձայներու բարձրաձայն  
խօսուըռտուք մը. այն ատեն միայն իմացաւ,  
երբ իւր քովէն անցան այդ ձայները հանող-  
ները: Երկու աղջիկներ էին, վարդազոյն  
չըջազգեստներով, նրբիբան ու հովի մը պէս  
զուարթ եւ արեւի մը պէս գեղեցիկ: Եր-  
կուքն ալ, խօսելէ ու խնդալէ դադրելով,  
Արթաքիին նայեցան պահ մը, եւ Արթաքին  
ալ անոնց:

—Արթաքին է, ըսաւ անոնցմէ փոքրը քո-  
վինին, կէս մը ուրախ զարմացումով, ու  
ապա երկուքն ալ իրենց առջի շիրքը վեր-  
ստանալով զեփիւռի մը պէս հեռացան այդ  
տեղէն:

Արթաքի երկու աղջիկներն ալ ճանչցած էր.  
մին Վարդուհին էր եւ միւսն ալ քոյրերէն  
մէկը: Ամբողջ երակներուն մէջ, արիւնի

տեղ, հալած կապար կարծես սկսաւ շրջիլ,  
կապարի տաք հոտանք մը, որ Վարդուհին  
նայուածքովը եւ ձայնին թրթռումովը իւր  
աչքերէն ու ականջներէն ներս սկսած էր  
լեցուել: Եթէ այդ ըսպէին Արթաքիին խիստ  
մօտէն մէկը անցնէր, պիտի լսէր դողդոջուն,  
տոգոյն այդ տղուն կծկուած շրթունքներուն  
մէջ հազիւ լսելի ճիչ մը.

—Վարդուհին... .

Երբ Արթաքի իւր ըսպէական բռուն տպա-  
ւորութենէն ուշաքերեցաւ, լսեց տակաւին  
երկու քոյրերու զուարթ, խօլ խնդուքը, ու  
բուն փշուրները իրիկուան սիւքը իրեն կը  
քերէր՝ գլխոտ հաւատարմութեամբ մը կարծես.  
ու տեսաւ դեռ բազմութեան հազիւ խառ-  
նուած՝ անոնց փափուկ իրանը իրարու թեւ  
մտած, պատկերներու մէջ տեսնուած երկու  
հրեշտակներու նման խելայեղիչ, եւ ինչ որ  
աւելի բունն ցունց մը տուաւ իւր սրտին,  
հեռուն կիւ երու եւ մարդոց անկարգ խում-  
բերուն մէջ խառնուած Վարդուհիի գլուխն  
էր, որ երկու անգամ անոյշ ժպիտով մը իրեն  
զարձեւ էր, զինքը տեսնելու համար:

Այն օրուրնէ սկսեալ, անհամար սպանիա-  
կան դղեակներ սկսաւ շինել Արթաքի, մա-



նաւանդ երբ օրուան խոնջէնքէն ընդարմացած մարմինը, գիշերը, անկողնոյն մէջ կը տա-  
րածէր, վերմակը գլխուն քաշած՝ իւր խոր-  
հուրդներուն խանգարուելու գողովը պաշար-  
ուած, երկար ատեն կը խորհէր այդ աղջկանը,  
իւր սիրոյն, իւր ապագային վրայ, իւր ար-  
դայական օրերուն քաղցր վերջիչումները կ'ու-  
նենար. բնաւ չէր մտցեր, այն անցած աղւոր  
օրերուն, մանաւանդ, մէկ յիշատակը. ամ-  
բողջ մանրամասնութեամբը կը յիշեր զայն  
ու, ամէն հեղ այդ յիշատակէն ազգու եւ  
տեւական սպաւորութիւններ կը ստանար:

Օր մը, ամենքը միատեղ, սենեակ մըն էին  
ժողովուած խաղալու համար. Արթաքի իսկոյն  
խաղ մըն էր հնարէր. միւսներն ամբողջ աղ-  
քատ ընտանիք մը պիտի կաղմէին մին մայր,  
մին մեծ մայր, մին աղջիկ եւ այլն պիտի  
ըլլային. ու ասոնք իր տունը վարձած պիտի  
ըլլային, բայց խիստ աղքատ ըլլալով, չպիտի  
կրնային վճարել տանը վարձքը, ու Արթա-  
քի՝ անգութ տանաէր մը, պիտի դար ու  
զանոնք դուրս պիտի վճռուէր տունէն: Բո-  
լորնին միասին կարգով նստած աղքատներու  
յատուկ խեղճ խօսքեր կ'ընէին զարմանալի  
լրջութեամբ մը եւ ահա յանկարծ, Արթաքի,

բաճկոնակը հակառակ կողմէն հագած, հօրը  
գիշերային դգակը՝ գլուխը՝ վրայէն կապուած  
կապոյտ լայն թաշկինակով մը, աչքերը չա-  
փազանցօրէն խոշորացած, խոժոռ դէմքով  
մը ու պոռալով սենեակէն ներս կը մտնէ:  
Վարդուհի, Արթաքիի այս չարափոխուած  
դէմքէն իրական սոսկում մը կ'ունենայ, ու  
արտասուալից՝ երկիւղէն, իսկոյն, իւր պըզ-  
տիկ գիրուկ բազուկները քացած Արթաքիի  
վիզը կը նետուի, պաղատագին ու գողգոջուն  
ձայնով մը գոչելով:

—Ա՛հ, մի՛, մի՛, Արթաքի, մի՛ ընեք...  
կը վախնամ...:

Արթաքի, տակաւին ականջին մէջ կըզգար  
այս սարսուտ ձայնին աղեկէզ թրթռումը,  
եւ աչքին առջեւ, Վարդուհիի դողահար, արժ-  
գոյն դէմքը արցունքէ փալփուռն աղերսարկու-  
նայուած քով:

\* \* \*

Մինչեւ այն ատեն չէր խորհած Վարդու-  
հիին տունը փնտռել. զիպուածով, օր մը  
գտաւ զայն. թաղին ամենէն հարուստ մէկ  
փողոցին մէջ, լայնանիստ սպիտակ շէնք  
մըն էր անիկայ մեծ, կանանչ փեղկերով:

Այդ շէնքը, հարստութեան այդ ամփակ կոթողը, սոսկացուց զինքը. առաջին անգամն ըլլալով, սարսափով տեսաւ, իրեն եւ Վարդուհիին միջեւ գտնուած վիհը: Ոչ մէկ բանով կրնար գոցուիլ անիկայ, միշտ հեռու պիտի մնար անկէ, ու իւր սէրը, իւր պաշտումը, որ զարգացեր էր հիմակ, անստունդ պիտի թառամէր: Ու այդ օրէն, իւր սէրը, որ մինչեւ այն ատեն անոյշ բոց մըն էր եղած, որուն մէջ իւր յոգնութիւնը իւր ցաւերը կը հալեցնէր գիշերները, եւ որուն նշոյլները, հեշտասուն եւ սուրբ երազներ, այնքան անյազուրդ ու լիաթոք կը ծծէր, այդ սէրը կրակ մը եղաւ, անոնցիօրէն այրող ոչնչացող կրակ մը, իւր նորահաս երիտասարդի խանդին, ըզմանքներուն եւ այն ամեն բաներուն համար, որոնք իւր կեանքին անդորրութեան տարերքը կը կազմէին:

Իւր մտածումներէն, յոյսէն լքուած, արխուր երիտասարդ մը եղաւ Արթաքի, միայն իւր քոյրերուն եւ մօրը խանդակաթ սիրովը պաշարուած եւ անոնց համար միշտ անձնուրաց:

\* \* \*

Այն թուականէն քանի մը տարիներ վեր-

ջը, երբ Արթաքիի հայրը ալ սկսաւ աղքատանալ, Քրիս ազան՝ շնչերակի խզումէ մը յանկարծամահ եղաւ: Աղջիկները իրենց մօրը թեւին տակ մեծցան ու անոր գաղափարներովը մնան — մայրերնին բոլորովին անստգիւտ կին մը եղած պիտի ըլլար, եթէ բնաւ որութեանը մէջ՝ փառասիրութիւնը չափաւոր կերպով ունեցած ըլլար: Ու գեղեցիկ ալ էին այդ աղջիկները: Հայ ընտանեկան համեստութիւնը, այս աղջիկներուն զէմքին վրայ, անմեղ եւ անկեղծ շուք մըն էր թողած շնորհի, որ հիանալի կ'ընէր զիրենք եւ ճշմարտապէս պաշտելի:

Վարդուհի եւ իւր քոյրերը բոլորովին մոռցեր էին իրենց պղտիկ մտերիմները — եւ այս բանին մէջ մաս ունէր իրենց մօրը փառասիրութիւնը — ու ասոնք օր մը իրարու չը հանդիպեցան ա՛լ. բացի այն կիրակի օրէն, երբ երկու քոյրեր Արթաքին նշմարեցին: Վարդուհի այն օրը, ի տես Արթաքիի՝ զգացումներու վերագարծ մը, վերածնում մը ունեցաւ անոյշ եւ հմայիչ, որ, ընդ երկար տրոփել տուաւ իւր կոյս սիրտը, եւ ապա, զարծեալ մոռցաւ, կարծեմ, զանիկայ:

Քրիս ազա, իւր մեռնելու պահուն, բաւա-

կան հարստութիւն մը թողուց իւր կնկան եւ երեք աղջիկներուն. այնպէս որ իւր ընտանիքը, այդ հարստութիւնով, կրցաւ բարեկեցիկ ընտանիքներու փայլուն շարքին մէջ իւր գիրքը պահել ըստական տարիներ:

Վարդուհիի մայրը, իւր ամուսինին մահէն մէկ քանի տարիներ վերջ՝ ա՛յլ սկսեր էր ունենալ ամէն մայրերու անխուսափելի պարտականութիւններէն գլխաւորը. աղջիկները առն անդ ընել: Սակայն, ինչպէս քիչ մը առաջ յայտնեցինք, փառասէր էր քիչ մը եւ չափէն աւելի հաշտող, իւր բառովը՝ «պէտք եղածին պէս աղջիկներուն ապագան խորհող», ուստի, իւրաքանչիւր աղջկանը համար, հաւասարապէս մեծկակ գումար մը դրամօժիտ պատրաստելէ վերջ, սկսաւ սպասել, որպէս զի հարստութիւնով փայլուն երիտասարդներ իւր դուռը չայնն եւ իւր աղջիկներուն ձեռքը խնդրեն կարգով: Արդ, պատահեցաւ որ, իւր դուռը բաղխողները շատ հարուստ չեղան կամ կարգով չուղեցին եւ ա՛յս, բաւական տարիներ, այնպէս որ այս հաշտող մայրը, այս «գաւկներուն ապագան պէտք եղածին պէս խորհող» մայրը՝ ատեն մեղաւ, եւ այս այն ատեն, երբ մէկը

երեսունին մատ մըն էր մնացեր, որ ճշմարիտ երկիւղ մը ունեցաւ՝ կարծելով թէ՛ չպիտի կրնայ ամուսնացնել աղջիկները: Սակայն թիզ մը իսկ չը հեռացաւ իւր մտադրութենէն:

— Է՛հ, կը խորհէր ինքնիրեն, վաստակը քիչ մարդու տամ, որպէս զի ցամաք հաց ուտէ աղջիկս, տարի մը, երկու տարի տակաւին կրնամ սպասել, զեղեցիկ են եւ հարուստ, ու այնքան թարմ, որ ամենէն մեծս հազիւ քսան տարու կերեւայ:

Ու կը սպասէր ինք ու իրեն հետ մէկտեղ աղջիկներն ալ կը սպասէին. եւ արդարեւ մէկ երկու տարիէն յաջողեցաւ կարգել երկու աղջիկները, մէկը հարուստ կարծուած նըրբամիտ երիտասարդի մը տուաւ, որուն վաճառատանը մէջ, կարգով շարուած ապրանքի ծրարներուն, թուղթերու մէջ խնամով պահուած խոշոր աղւաններ ըլլալը, երկու տարի վերջ, քովէն վճնտած աչկերտը, եկաւ զաղանաբար պատմել Քրիստապոսին կնոջ, կայծակահար ընելով անիկայ, եւ միւսը՝ տարիքը առած, այլ իրապէս հարուստ մարդու մը տուաւ:

Իւր երկու քոյրերուն ամուսնանալէն յետոյ

Վարդուհին մնաց բաւական կսրեւոր գրամ-  
օժիտով մը. մայրը, որ երկու աղջիկներուն  
ամուսնութեամբը բաւական փորձառութիւն  
էր շահեր—քանզի երկուքն ալ դժբաղդ էին  
եղած, հաստատապէս՝ մտադրեց, այս աղջիկը  
ո՛չ տարիքն առած մարդու տալ եւ ո՛չ ալ  
հարստութեան քանակը անորոշ եղող երիտա-  
սարգի: Ու սպասեց:

Եւ եղաւ որ Վարդուհի, իւր գարուններ-  
րուն քսան եւ իններորդը սկսաւ վայելել:  
Այն տարին, Արթաքի, որ խանութպանի մը  
քով վեց ոսկի ամսական կ'առնէր, ձեռքը  
խնդրեց Վարդուհին: Խեղճ երկտասարդը  
չարաչար մերժուեցաւ մօրմէն: Կը յուսար  
որ, աղջկան՝ ա՛լ տարիքն առած, առանց  
դրամօժիտի ալ գուցէ, այլ եւս հետամուտ  
մը չը գտնուելով, իրեն կնութեան տային:  
Կեանքի ամենէն դառն պատրանքներէն մին  
կրեց այս մերժումով. սիրտը լեղի ատելու-  
թեամբ մը լեցուեցաւ ամեն բանի դէմ, որ  
զինքը կը շրջապատէր, ա՛լ իրեն համար  
յոյսի վերջին շիթն ալ ցամքած էր, եւ իւր  
սէրը, առանց անոր եւ առանց ալ հաւատքի,  
վայրագ բան մըն էր եղած, որ իւր էութե-  
լունը կը զիշատէր անհոգօքէն: Այդ երեսնա-

մնայ կտրիճը, մութին մէջ, իւր մազերը  
փեթտեց անաւոր յուսահատութեամբ մը ու  
գիշերուան պաղ ցօղին խառնեց իւր տաք ու  
յորդ արցունքները, հեկեկաց, հայոյեց, մը-  
ռընչեց, ոչ ոք իմացաւ անոր տուայտանքը:  
Փոխուեցաւ պահ մը իւր համակերպող անոյշ  
քնաւորութիւնը, ամեն տեղ իւր սրտին դառ-  
նութիւնը սփռեց. ամեն բանի վրայ անդի-  
տակից տարակոյս մը ունեցաւ, ու միայն  
տառապանքը տեսաւ, իրեն համար ամենէն  
իրական բանը, միակ մթնոլորտը, որուն մէջ  
ապրիլ դատապարտուած էր իրեն—անշուշտ  
—ճակատագիրէն:

Օրեր ու տարիներ անցան ու չը գաղբեցաւ  
յիշելէ՝ այն մանկական քնքոյշ բազուկներու  
չաղապատումը իւր վզին, որուն վրայ կը  
կարծէր տակաւին զգալ անոր կաթնաթոյր  
փափուկ մորթին հեշտախառն ջերմ հպումը,  
ու ամեն անգամ ալ այն յիշատակը իրեն հետ  
բերաւ՝ բոլոր յորդութիւն մը ատելութեան,  
սրուն, տագնապներուն տակ սոսկալի հրդեհ  
մը ըլլալ կուզէր, իւր էութեան ամենէն զօ-  
րաւոր թափովը, ամեն բան բախկնու, մոխիր  
դարձնելու համար:

Ու տարիները շարունակեցին անցնիլ ան-

ընդհատ անոր գլխուն վրայէն, հետզհետէ յափշտակելով իրմէ մազին սեւն ու կեանքին ուժին մասնիկները. եւ փոխարէն թողուցին անոր բաւական հարստութիւն մը. յիսուն եւ հինգ տարու էր, մազերը ճերմկցած, այտերը թարչամած, ճակատը կնճռոտ եւ կունակը քիչ մը կորացած, երբ խանութպանի գործակատարը արդէն սկսած էր ըլլալ վաճառական մը. ինք հիմայ գրագիրներ ու գործակատարներ ունէր եւ հարուստներու գասակարգին մէջն ալ բաւական լայն տեղ մը:

Այդ հարստութիւնը բնաւ չերեցաւ իւր աչքին. ի՞նչ ընէր այդ օգնութիւնը, որ շատ ուշ կը հասնէր, պահ մը իւր տառապանքին ծանրութիւն մը տուաւ ատիկայ. արդէն մայրը ու քոյրերը ոչ եւս կ'ապրէին, ինք առանձին էր իրեն հետ աճող վշտին հետ. ուստի այդ գրամը, զոր առատօրէն անհաշիւ ըսկսէր էր շահիլ, լիարուսն ցրուեց ամեն տեղ, ամեն մարդու, ինք որ սրտին խորը, ատելութեան էր տեղ տուած, իւր անջնջելի սիրոյն առնթեր, առանց ուզելու՝ օգտակար եղաւ ամենուն, ու ամենէն ալ սիրուեցաւ, ու ինքն ալ անզգալաբար սիրել սկսաւ ամենքը, որովհետեւ ոչ ոքէ ակնկալեց երբէք, ու ա-

տելութիւնը, իւր սիրոյն պէս հսկայ ու անծիր, իւր վայելած համակրանքին մէջ, հետըզհետէ տկարացաւ հալեցաւ անուշ անգորութեան մը անոյշ գուարթութիւնը պարգեւելով, վշտէ յոգնած այդ կեանքին:

Իւր սիրտը գոց տուփ մը ըրաւ, որուն մէջ անազարտ պահեց իւր միակ սէրը. մերթ կը բանար անիկայ, ու անհուն գուրգուրանքով մը կը զիտէր իւր զպացուններու վարդին թոշնած, խեղդուած թերթերը, ոմանք արիւնի գոյնով, ոմանք արցունքի երանգով եւ ոմանք վշտէն սեւցած ու ալ բան մը չէր խորհեր եւ աչքերը գոց, կը սպասէր զգալ պատիկ, գիրգ բաղուկներու տաք շփումը իւր թարչամած կաշիքացած լայն վզին վրայ. . . ու ապա խուլ հառաչքով մը իւր գունատ շըրթունքները կը դողդոջային:

Օր մը հետաքրքիր եղաւ իմանալու թէ՛ ի՞նչ էր եղած Վարդուհին: Այսչափ զիտէր թէ, քսան տարիներ առաջ, մայրը մեռեր էր առանց Վարդուհին ամուսնացնել կարենալու, եւ Վարդուհի, յետոյ, իւր քոյրերուն քով սկսեր էր ապրիլ ու ա՛լ լուր չէր առած անոր վրայ: Այս հետաքրքրութիւնը նախ պարզ սակայն յետոյ ըղձանքի մը թոյր ստատիւ-

թիւնը ունեցաւ Արթաքի աղայի մաշած սըր-  
տին մէջ:

Դիպուածը օր մը դէմը հանեց անիկա:

Պառաւցեր էր այն վարդ այտերով խար-  
տեաշ աղւոր աղջիկը, մոխրագոյն մազեր ու  
տոբոյն թոռմած դէմք մը ունէր սեւ քօղին  
տակ. իւր մայրը զինքը չը կրնալ ամուսնա-  
ցնելէն վերջը, իւր փառասէր եւ փարայասէր  
հակուսներովը, քեռայրները ու քոյրերը բո-  
լորովին չէին կրցեր կարգել անիկա: Ու իւր  
քեռայրներէն մին, այն երիտասարդ հարուս-  
տը, որ անշուշտ չէ մոռցած, դրամօժիտը եւ  
մօրմէն մնացած ժառանգութիւնը յամբարար  
կուլ էր տուեր, փոխարէն մշտնջենապէս իւր  
տանը մէջ սենեակ մը եւ սեղանին վրայ ալ  
սպաս մը դնելով անոր տրամադրութեան  
տակ: Վարդուհի անտրտունջ համակերպեր  
էր իւր վիճակին, որ քաղցր չէր երջէք, եւ  
զօր իւր մայրն էր յարգարեր:

Արթաքի եւ Վարդուհի, այն օրն, երբ ի-  
րարու հանդիպեցան, խօսեցան ալ իրարու  
հետ: 40-45 տարիներէ վերջ առաջին անգամն  
ըլլալով իրարու ձայն կը լսէին, ասիկայ աշ-  
խարհիս ամենէն տխրագոյնիկ բաներէն է.  
որքա՛ն փոխուեր էր իրեն ձայնն ալ, երկու-

քըն ալ անցողակի եւ անոյշ փափկանկատու-  
թեամբ մը իրենց մանկութիւնը յիշեցին եւ  
երկուքն ալ, մինչեւ իրենց ձերմակ մազերը  
սարսուացնող հառաչ մը ունեցան, զօր խեղ-  
դեցին իրենց կոկորդին մէջ:

Այս տեսակցութիւնը, ապա, Արթաքի աղայի  
մտքին մէջ խորհուրդ մը ծնոյց, որ առջի  
անգամ բաւական անհեթեթ երեւցաւ իրեն,  
սակայն անոր կարելիութեանը բնականու-  
թեանը վրայ այնքան համոզուեցաւ ապա՛ որ  
իւր ամբողջ ուժովը այդ բանին յարեցաւ:

Վարդուհիին հետ ամուսնանա՛լ:

Իրաւ տարիքնին առած էին. հետեւաբար  
պիտի այգանուէին. բայց ի՛նչ հոգ, ճշմարիտ  
է թէ միակ բան մը չպիտի ունենային, մեղ-  
բալուսին մը, այլ իրապէս, իրենք մեղբա-  
լուսիներուն ամենէն տեւականը, սուրբը,  
հանդարտը պիտի վայելէին, եղբօր եւ քրոջ  
մշտատեւ, անձանձրոյթ, փափուկ գորովովը  
լեցուած անոյշ կեանք մը պիտի ունենային,  
որ զիրենք մինչեւ գերեզման պիտի տանէր  
առանց վշտի: Իր երիտասարդ կեանքին մէջ,  
երբ սէրը, իւր մէջ այնքան խանդավառ էր  
եւ բուռն, Վարդուհիի թարմութիւնը ու  
գեղեցկութիւնը հարկաւոր սնունդն էր իր  
երջանկութեան, բայց հիմակ, իր սէրը որ

գողգոջունն աղապատանք մըն էր գարձած, մեղմ բուրում մը, քրոջ մը քաղցր նայուածքովը եւ անոր բարի շունչովն ալ կրնար բաւականանալ:

\* Ու այս երկու թիւթիւնները, անխօսուկ, լռիկ ամուսնացան օր մը, առանձին՝ իրենց թաղին եկեղեցւոյն մէջ, առանց բարեկամներ հրաւիրելու, անգիտակից երկիւղով մը գուցէ երեւակայական արգելքի մը դէմ, զոր երբէք կրնար ունենալ իրենց այս միութիւնը, որուն միակ անտեղութիւնն այն էր որ ո՛ւշ էր մնացեր...:

1894 Յունիսար 14



## ՏԺԳՈՒՆԱԾՆԵՐԸ

Ա.

Յունիսի արեւին կիզիչ ճառագայթները կը լիզէին մարգագետնին անոյշ կանանչը, ու խոտերը՝ փափուկ, նիհար ու զողգոջունն, այրումի խուլ տուայտանքով մը կը տոգունէին հետզհետէ այդ անողոք լիզումին տակ:

Կը տոգունէին հետզհետէ հէք խոտերը դաշտին, ու Ազաւնի՝ պատուհանին ձերմակ

շրջանակին մէջէն, հիւանդոտ ու խոնջած գլուխը ձեռքին կրթնցուցած, այդ սարսոտ տոգունումը կը դիտէր անմեղ խոտերուն, որոնք այն ինչ գարուն մը կեանք էին վայելած:

Ինքն ալ միթէ չէ՞ր նմանած այդ դաշտին:

Անոր պէս Ապրիլին սկսելով ապրիլ, չէ՞ր վայելած երջանիկ կեանք մը մինչեւ այն ատեն, եւ ինքն ալ հիմա չէ՞ր զգար մէջը՝ սկսումը կիզիչ լիզումի մը, որ իւր էութիւնը կը խանձէր:

Անոր հետ սկսած էր ու անոր պէս ապրած. հաւանական չէ՞ր որ անոր հետ վերջացնէր ինքն ալ իր գոյութիւնը:

Ու հոգեպինդ սեւեռումով մը՝ հեռուի գունատումին մէջ կորուսած իւր վշտաբոյր նայուածքը, հազիւ շունչ կ'աններ Ազաւնի՝ թըշուստութեան մը սպասող մարդու մը անձկութեամբ:

Բայց անորոշ ատենէ մը ի վեր, դաշտը, որուն վրայ արեւին տաք ճառագայթները անգութ խայտանքով մը կը թրթոպին, թեթեւ թափանցիկ մշուշով մը լեցուիլ կը թուէր Ազաւնիի նայուածքին:

Եւ այդ մշուշը կը տարածուէր, կը բարձրանար, կը խտանար յամբարար՝ միջնադի անորոշութեան մէջ խեղդելով դաշտին ու

հորիզոնին ոսկեգօծ գիծերը: Ու Աղաւնի ամբողջ թափովը ձգուած այդ մատախուզի կուտակումին, որ միայն իր նայուածքներուն դէմ կը գոյանար, թմրութիւն մը կզգար հեղձուցիչ եւ տաք:

Եւ այս թմրիբի տեւողութեան միջոցին, դաշտին գորշագունութեան մէջէն, ստուերներ կը ծնէին կամաց կամաց, մուխի դարձգարձիկ սաւառնումով մը տարածուելով, ժողվուելով, թանձրանալով կեդրոնի մը շուրջ, ուր իւր սեւեռաբիբ նայուածքներն էին դամուած. եւ հոն, անոնք, իրենց աստիճանական կազմութեամբը երեւան կը բերէին հետզհետէ պատկեր մը, որուն ամէն մէկ մասը ախուր շահագրգռութեամբ կը զիտէր Աղաւնի՝ երազող մարդու մը գիտակցութեամբը ճանչնալով զայն. — իր կեանքին պատկե՛րը. . . :

\* \* Տասն եւ եօ՛թն տարեկան. դպրոցէն հազիւ ելած, դեռ տղու անոյշ անգիտակցութեանը մէջ կեանքի սահմանին նկատմամբ, ու մինչեւ այն ատեն իւր անխոհ եւ աննպատակ հոգւոյն սնունդ ունենալով դպրոցականի աննշան անուրջներ ու սարսամ ճիւղը յոյսի, եւ փետուրի պէս խել խօսք ու չը զգացած տակաւին իր մէջ երկնքի մը գոյութիւնը, որ հզօր նայուածքի մը տակ կը բացուի, նշա-

նեցին զինքը մարդու մը հետ, որ իր կրկին տարիքն ունէր եւ զօր առջի անգամ տեսաւ աղջիկեսի օրը:

Կեանքի վրայ իւր ունեցած մշուշէ գաղափարներն, անզօր եւ անձեւ, չը զօրեցին երբէք, իրեն համար պատրաստուած այս նոր կեանքին գիտակցութիւնն ամբողջովին տալ իրեն. մանաւանդ որ ըսին, համոզեցին զինքը՝ թէ այս էր կեանքը:

Քանի որ այսպէս էր կեանքը, ի՞նչ կրնար ընել: Հետեւաբար չը մերժեց իւր ձեռքը. եւ մտաւ այս նոր կեանքին մէջ՝ մէկ դպրոցէն ելնող եւ ուրիշ դպրոց մը գացող տղու մը բոլոր հոգեկան կացութեամբը, անձանօթ դողով մը սիրտը սեղմուած եւ երկիւզախառն հետաքրքրութեան մը յուզումներով երբուհն:

Ու նշանածի շրջանին մէջ այնպէս վարուեցաւ, որպէս տուն կուտային իրեն. իրմէ մեծերուն շունչին տակ շարժող մեքենայ մը եղաւ պարզապէս՝ նշանած աղջկան դեր կատարող: Յանցանքը ի՞րն էր՝ երբ սէր չէր ներշնչած նշանածն իրեն. թէպէտ եւ ինք անգիտակ ալ էր տակաւին սէր ըսուած ձգտումի մը գոյութեան, որ երկու կեանքեր շողի գիծերու պէս իրարու կը մօտեցնէ:

Հետեւաբար չը զարմացաւ Աղաւնի երբ



նշանածին տեսքն. առաջին օրէն, որոշ տը-  
պաւորութիւն մը չը թողուց իւր վրայ, ոչ ա-  
տելութեան եւ ոչ համակրանքի: Բայց հետ-  
ըզհետէ իրենց տեսակցութիւնները սանկ պզ-  
տիկ, անորոշ համակրանք մը ծնուցին իւր  
մէջ, այն սովորական համակրանքը, զորոնք  
երկու մարդիկ իրարու նկատմամբ կ'ունենան  
քանի մը անգամ իրարու հետ տեսնուելէ վերջ.  
ամենէն պարզ, ամենէն խուսափուկ համա-  
կրանքը, համակրանքներուն հիւլէականը ա-  
նիկայ:

Սակայն Ազաւնի այս պզտիկ համակրանքը  
զգալով հանդերձ, պակաս բան մը կը գտնէր  
անոր վրայ, որուն չէր կրնար սահմանը գծել,  
եւ զոր անորոշ ըմբռնումով մը միայն կ'իմա-  
նար, առանց բացատրել իսկ կարենալու. եւ  
արգահատելի միամտութեամբ մը, իւր նշա-  
նածը, իւր ուսուցիչներուն հետ կը բաղդա-  
տէր մտովի, չունենալով բաղդատութեան ու-  
րիշ եզր, բայց եթէ անոնք, որոնց հետ, իւր  
հօրմէն վերջ, աւելի մօտէն էր տեսնուած, ու  
ճանչցած՝ իբր իւր սեռէն գուրս անհատներ:  
Ու հա՞րկ է ըսել թէ՛ որոշ կշիռ մը չէր կըր-  
նար քաղել Ազաւնի այդ բաղդատութենէն,  
քանի որ իւր ուսուցիչներուն համար ունե-  
ցած զգացումը ու դատումը շատ հասարակ

բաներ էին, զուրկ ո եւ է յատուկ հանգա-  
մանքէ:

Եւ իւր հոգեկան անուամբ յամրաբար կը շա-  
րունակուէր կատարուիլ իւր մէջ՝ առանց  
արգիլուելու իւր նշանածի կացութենէն, քա-  
նի որ անոր անհրաժեշտ ըմբռնումը չունէր  
տակաւին: Ու կսկսէր զգալ իւր հոգւոյն փթ-  
թումը՝ ներքին դատարկութեան մը պէս պա-  
հանջկոտ, եւ կը զարմանար նշմարելով որ՝  
լուսնին ազօտ ցոլքը, ծառերուն մէջէն, իւր  
ուշը կը գրաւէր՝ հեշտին թրթռումով մը զին-  
քըն իրեն ձգելով. կամ վերջալոյսի ատեն եր-  
կինքը մեքամաղձոտ քաղցրութիւն մը կը թա-  
փէր սրտին խորը, եւ երբեմն յուսալու. խո-  
կալու, առանձին մնալու պէտք մը կը զգար.  
ամեն առաւօտ ալ երբ կ'արթննար, իրեն  
այնպէս կը թուէր թէ, ըզձանքոտ բնազդ մը  
կ'ունենար այն օրը, նոր բարեկամ մը, ըն-  
կերուհի մը, ձայն մը, նայուածք մը վայելելու:

Իւր հոգւոյն այս անորոշ վիճակին մէջ Ա-  
զաւնի լուրջ ու տխուր եղած էր քիչ մը, զոր  
տունիները իւր նշանածին նկատմամբ զգա-  
ցած սիրոյն կը վերագրէին, մինչդեռ հէք աղ-  
ջկան սրտին մէջ շատ քիչ տեղ ունէր նշա-  
նածը. սրտի՞ն ըսի, բայց ո՛չ, մտքին մէջ.  
մեքենական համակերպութեան մը գաղտնի-

րին կեդրոնը՝ սովորական հրաման մը, պարտք մը կատարելու մտածումին պէս աննշան:

... Ուամուսնութիւնը կատարուեցաւ օր մը:

Հա՞րկ է հոս գծել կեանքի մէկ քանի ժամերու տխու՛ւր, ծայրահեղօրէն տխու՛ւր այն պատկերը, որուն մէջ մանկական անբիծ տղա-գիտութիւնը կ'ընդլզի անասունի աղտոտ կրքին դէմ երկրաքարչ. ուր զարչանքը եւ սարսափը՝ պայծառ դէմքի մը վրայ ահեղ սարսուռի մը մթութիւնը կը քսեն. եւ ուր ամբողջ վիշտը երեւան կուգայ՝ յանկարծական անկումով անդունդի մը մէջ խորասուզուող մարդուն. որ անկասկած քայլերով էր յառաջացած դէպի անոր:

Ինչ որ մնաց Աղաւնիին՝ իր ամուսնութեանէն, ահեղ քստմնումի մը այն թոյնն էր, որ մէկ գիշերուան մէջ ամբողջ գոյութեանն էր խառնուած, նայուածքին խորը հաստատելով իւր ցաւին մութը, ու շրթունքներուն անկիւնը՝ իւր կծու կծկումը:

Եւ լացաւ խեղճ աղջիկը՝ լացա՛ւ այնքան, որքան չէր խնդացած իւր կեանքին մէջ:

Եւ իւր վշտին ծանրութեանը տակ, միտքէն շատ բաներ անցուց իւր տգիտութեանը, իւր ծնողքին, իւր ճակատագրին համար, մինչեւ այն ատեն, երբ համեստութեան առտնին

գաղափարները, աղէտին անդարմանելի վիճակըն ու ծաղրելի ըլլալու երկիւղը, անոր մէջ հետզհետէ սկսան լեցնել համակերպութիւնը՝ հալած կապարի պէս այրող եւ ճնշող:

Սակայն դժբաղդ աղջիկը կրնա՞ր ընդերկար գիմանալ այն գիշերներուն, որոնք բոցի մը պէս իր մարմինը կը շրջապատէին, ու յետոյ երկաթի պէս ալ՝ կամքին, ինքնութեանը եւ զգացումներուն վրայ կը ծանրանային անխընայօրէն:

Զարմանալի էին արդարեւ իւր ճիգերը, որոնցմով կ'ուզէր գիշերներուն թողած սուկումի մութ ծիրը սրբել իւր թաց արտեանունքին եզերքէն, եւ ամէն առաւօտ, գարչանքի ոարսուռը ի բաց վանել իւր շրթունքներուն վրայէն: Քանզի անլուր հպարտութիւն մը զգեցած էր Աղաւնի իւր վշտին մէջ, եւ չէր ուզեր երբէք որ մէկը իր կացութիւնը նշմարէ, նոյն իսկ իւր ծնողքը, որոնց դէմ կը գանդատէր:

Սակայն անօգուտ բոլոր այն ճիգերը, քանզի այդ տեսակ վիշտերը կրնա՞ն ծածկուիլ երբէք, որոնք փուշերու պէս սրտին մխուած՝ յարատեւ արիւնահոսութեամբ մը կեանքին կորովը եւ առողջութիւնը կը պարպեն:

Եւ ահա օր մը, իւր ամուսնութեանէն մէկ

երկու տարի վերջ, տունինները դողով նշմարեցին նուազկոտութիւնը անոր նայուածքին, որ սեւ կոպիճներուն մէջէն դժուարաբար կ'արձակուէր, եւ հալումը անոր այտերուն, որոնք հիւանդարոյր տոգունութեամբ մը կը ծածկուէին:

Ու Աղաւնի անկողին ինկաւ, իւր հիւանդութիւնը ունենալով սրտին այն կողմը, ուր ոչ մէկ գիտութիւն կրնայ իւր դարմանները հասցնել, եւ վերջին աշունը ու ձմեռը հոն անցուց անհամբեր սպասումով մը մահուան, ուրկէ՛ միայն այլեւս կ'ակնկալէր իւր յուսահատ մաքառումներուն վերջնական դադարումը: Իայց գիտութիւնը անոր ապաքինումին համար տունիններուն յոյսը գարնան վրայ դնել տուած էր: Եւ արդարեւ երբ գարունը եկաւ՝ առողջութեան յամր վերադարձ մը նըշմարուել սկսաւ Աղաւնիի կաղմութեան վրայ:

Ու Աղաւնի ինքն ալ կզգար այս գարնան առաջին ճառագայթները կարծես հետզհետէ կը շոգիացնէին անոր հոգւոյն մթին խոնաւութիւնը, ու մոռցած պահ մը՝ իւր վիշտերը, սոսկումները եւ ճգնաժամերը, արեւուն ոսկեղօծումը տեսնելով իւր սնարին վերեւ, մանկական անմեղ հրճուանք մը կ'ունենար եւ անդիտակից բաղձանք մը ապրելու:

Եւ հետզհետէ քանի գարունը կը յառաջանար, այնքան գոհ կըլլար Աղաւնի՝ թարմ ու առողջ կեանքի մը հոսիլը զգալով իւր գոյութեանը՝ մէջ, որ իւր այտերը կ'ուռեցնէր՝ ուժի թեթեւ երանգով մը զեղեցկացնելով զինքը:

Ու ապրիլին վերջերը բոլորովին ոտքի վերայ էր Աղաւնի, ու բժիշկները անոր ամբողջական ապաքինումը փութացնելու համար, խորհուրդ տուած էին պտոյտներ ընելու դաշտերուն մէջ, ամեն օր:

\* \* Երբ դաշտերը՝ իրենց վերանորոգուած թարմութեանը մէջ անսահման ժպիտի մը հըմայքովը կը փողփողէին, փթթումի գինովութիւն մը սփռելով իրենց շուրջ, եւ երբ ծառերը՝ իրենց կանանչագեղ շրթունքներուն մէջէն բնութեան հիասքանչ զարթօնքը կը երգէին մեղմանոս խորհրդաւորութեամբ մը, Աղաւնի բարեկամուհւոյ մը թեւին կրթնած, առտու եւ իրիկուն, պտոյտներ կընէր հո'ս հո'ն, մարդագետնին մէջ, ու իւր ամէն մէկ պտոյտին, իւր աչքերուն մէջ, անօրինակ խանդավառութեան մը փայլը կը լեցուէր, եւ կուրծքին տակ՝ անսահման խնձիղ բոյրը: ու երբ տուն կը վերադառնար, դէմքը գուհաւորուած կ'ըլլար վարդի անոյշ երանգով:

մը ուրկէ տունինները բաւական ժամանակէ  
ի վեր իրենց կորուսած անգործութիւնը կը  
վերագանէին:

Եօթը ութը ամիսներէ ի վեր, հիւանդու-  
թեան շնորհիւ, դադրեր էին ալ մութին ա-  
հեզ տուայտանքները. առողջ ու երջանիկ կը  
զգար զինքը, երջանիկ՝ իւր զպրոցականի  
վիճակին պէս:

Եւ այս հոգեկան կացութիւնը՝ կատարեալ  
մտախաբութիւնը կուտար իրեն՝ իւր աղջկ-  
նութեան կեանքին. մտախաբութիւն՝ որ  
անգիտակցաբար կը թոյլատրուէր մասնաւո-  
րապէս իւր ամուսնոյն բացակայութենէն, որ,  
գործով, մօտակայ գաւառ մըն էր գացած,  
քանի մը չարաթիներու համար:

Ու Աղաւնի այս պատրանքը աւելի խոր,  
եւ յետոյ քիչ մըն ալ իւր շուրջը ազդելու  
համար թերեւս, պտոյաներու ատեն, իւր  
աղջկնութեան պէս կը հագուէր. մոխրագոյն  
կապտորակ շրջազգեստ մը՝ իւր մարմնին նի-  
հարութիւնը կը կաղապարէր քնքոյշ ծաղկի  
մը նուրբ ցօղունին գողգօղուն հրապոյրն ե-  
րեւան բերելով, վզին շուրջը կապուած լայն  
շղարշ մը, իւր տփոյն ձեւմակութիւնովը  
ղէմքին գունատութեան չեչտուիլը արգիլե-  
լով, կը ծածանէր ուսերուն վրայէն՝ անուրջ-

ներու աղջկան զգլխիչ երեւոյթը տալով անոր:

Ու արդարեւ, երբ դաշտերուն մէջ կը պը-  
տըռէր, իր վզի շղարշին ծածանումներուն  
մէջ՝ զէմքը նորարոյժ հիւանդի թեթեւ վար-  
դագնութեամբը ուշագրաւ, աչքերուն խորը  
ունենալով զուարթ թրթուսով նայուածք  
մը, եւ իր շարժումներուն մէջն ալ կենսա-  
լիւ ճապկութիւն մը, աղջիկ կը կարծուէր  
բոլոր անոնցմէ, որոնք չէին ճանչնար զին-  
քը: Ու անօրինակ հրճուանքով մը կ'իմանար  
իւր քովէն անցնող կիներու փախուքը,

— Ի՛նչ նազի՛ք աղջիկ է. . . :

Եւ թէպէտ կարի դո՛հ կը մնար Աղաւնի իր  
թողած տպաւորութենէն, սակայն առիկայ  
նոյն իսկ ցունց մը կուտար իրեն իր պատ-  
րանքի արբշտութեան մէջ, եւ իրա՛ւ խըն-  
դալով կը յարէր իր բարեկամուհիին ական-  
ջըն ի վար.

— Վաղը հաւանական է որ ձեռքս խնդրե-  
լու դան այդ կիները՝ իրենց տղոց համար:  
Սակայն այս խնդուքը կծու բան մը կը ծած-  
կէր միշտ իր մէջ որ սիրտ կը յօշոտէր:

Եւ փոխանակ սթափելու իր անուշ երազի  
թմրութենէն, աւելի կը թաղուէր անոր մէջ  
վասն զի՛ նոր կենսականութեան մը զուար-  
թութիւնովը լեցուած, իր հոգին հետզհետէ

անօրինակ, անանուն ձգտում մըն ալ կսկսէր ունենալ, անուրջի պէս քաղցր եւ բոյրի պէս թրթուուն ձգտում մը, զոր կը կարծէր թէ՛ անգամ մըն ալ ունեցեր էր՝ երբ տակաւին չէր ամուսնացած. այն ատեն կատարեալ անորոշութիւն մը ունէր անիկա, բայց հիմայ, կը խորհէր որ կրնար որոշել զայն. անսահման մարմաջի մը կը նմանէր ան, որ չէր յագնար բնութեան խայտանկար թարմութենէն, ուրկէ, անկողինը թողելէն ի վեր, կենսանորոգ հաճոյք մըն էր քաղած. ո՛չ, ոչ երկնքին պայծառ կապոյտը կը բաւէր անոր եւ ոչ ալ մարգագետնին զմրուխտի խայտանքը. այդ մարմաջը աւելի գեղեցիկ, աւելի բարձր, աւելի անբիծ վայելքի մը կ'ուզուէր. իր հօգին անձանօթ, անսահման յագուրդ մը, հըրձուանք մը կ'ըզձար:

Ու օր մը Աղաւնի, իր պտոյտներուն մէջ, այդ յագուրդէն, այդ գոհունակութենէն, այդ հրճուանքէն շիթ մը ունեցաւ վերջապէս՝ նայուածքէ մը, որ երիտասարդի մըն էր մեղամաղձոտ գիմագիծերով:

Այդ շիթին իր աչքերուն մէջէն անցնիլը հիացական գողով մը զգաց, եւ խորհրդաւոր զգացումի մը թրթուումովը լեցուեցաւ իսկոյն իր հոգէն: Երբ գիշերը այդ շիթովը սնաւ

Աղաւնի, սնո՛ւնդ, որ այնքան բարձր հեշտութիւն մը, այնքան անձանօթ արբշտութիւն մը առթեց իր զգացումներուն, որ հետեւեալ իրիկունն ալ՝ այդ նայուածքները փնտոց, իր կամքին, իր եռանդին բոլոր թափովը՝ սրտազեղ անձկութեամբ մը գիտելով զաշտին հեռաորութեանց մէջ սլքակող մարդոց ախշուհիները, անոնց մէջէն նախորդ իրիկուան երիտասարդը գտնելու համար:

Ու անկէ վերջ միշտ տեսաւ զայն:

Հազիւ քսան եւ չորս տարեկան խարտեաչ, առատ մազերով երիտասարդ մըն էր, որ գէմքին վրայ բնական լրջութեան մը սիրունութիւնը ունէր՝ մտածկոտ եւ համակրելի, եւ աչքերուն մէջ՝ ազդու փայլ մը կորովի ու խոհականութեան:

Երիտասարդը, որ նախ գութի փափուկ զգացումով մըն էր նայած այդ հիւանդոտ աղուոր աղջկան, անտարբեր չը մնաց հետզհետէ անոր կրակոտ նայուածքներուն ու համակրանքի խորին ազդումով մը համակուեցաւ անոր նկատմամբ. այնպէս որ, քիչ ատենէն, երկուքին համար ալ անհրաժեշտ դարձան իրենց հանդիպումները: Եւ անոնք զաշտին տեղոյն ձամբաներուն մէջ զիրար այլ եւս ըս-

կսան փնտռել իրենց սիրաշող նայուածքներով, ամեն իրիկուն, երբ արեւմուտքի հորիզոնի վրայ վերջալոյսի վարդ շողերը իրենց հմայքը կը թափէին:

Աղաւնի, հիմակ, ամեն ատենէ աւելի, կը զգար թէ կ'ապրի. այնքան երջանիկ կը զըտնէր այս կեանքը, որ նայուածքներու փոխանակութեան մը վրայ միայն հիմնուած էր. իրա՛ւ, բացարձակ երանութիւնը չէր այս, վասն զի շատ գիշերներ, երբ անկողինը կը մտնէր, լալու փափագ մը կ'ունենար բուն, ու կուլար ալ տղու պէս հեծկլտալով առանց որոշ պատճառի, սակայն այդ լացը, այդ յուզումն իսկ այնքան անոյշ էր, որ աւելի հեշտութիւն կը պատճառէր իրեն քան իր տղայութեան անխմաստ քահքահները:

Այլ եւս իր ամբողջ խոհերը եւ իր բոլոր զգացումները այդ դաշտին երիտասարդին էին ուղղուած, որուն վճիռ նայուածքներուն մէջէն անսահմանը եւ սուրբը կզգար: Ամուսինին յիշատակը, գէշ երազէ մը մնացած տպաւորութեան մը պէս թեթեւ, խուսափուկ, մշշային բան մըն էր եղած իր մտքին մէջ. ոչինչ կը մտածէր անոր վրայ, ու պատրանքի զարմանալի տրամադրութեամբ մըն ալ

ներքին անգիտակից համոզում մը, հաւատք մը, կարծես, ունէր զայն ա'լ բնաւ չը տեսնելու. եւ այս՝ անխորհուրդ կընէր զինքը՝ լիարուն վայելումի անյազ բաղձանքը տալով իրեն այն գերագոյն հաճոյքին, զոր մինչեւ այն ատեն չէր վայելած երբէք իր հոգին: Ուստի խենդի պէս վայելցց այս գինովութիւնը առանց բան մը խորհելու եւ առանց բան մը նկատողութեան առնել ուզելու:

Մայիսի վերջերը, իրիկուն մըն էր. Աղաւնի հոգեզմայլ խայտանքով մը լեցուած, տըղու մը պէս զուարթ ու թեթեւ քայլերով սուն վերադարձած ատեն՝ ամուսինը նշմարեց, որ նոր վերադարձեր էր ճամբորդութենէն, իւր կնոջ ուսիկ անակնկալ մը ընելու համար առանց օր առաջ իմացնելու իր վերադարձը:

Ամուսինին տեսքը աննկարագրելի ուրասափի մը մէջ խեղդեց Աղաւնիի զուարթութիւնը, փախալ գէմքին վրայ ցուրտ ծամածոտմ մը եղաւ, եւ հոգին՝ սոսկումի գալարումի մը մէջ սառեցաւ. . . :

. . . Այն գիշերն իսկ սկսան այն անհզ ցաւերը, զորոնք բաւական ատենէ ի վեր մոռցած էր՝ իր հոգիին գինովութեանը մէջ:

Աղաւնի, ատենէ մը ի վեր հոգիին վայելքներովը միայն կապրէր, բարձր հաճոյք մը, եթերային խայտանքի մը անուշութիւնը կը ծծէր՝ իր մտածումներովը եւ զգացումներովը բարձրութիւններու մէջ սաւառնած, ուր ամէն բան վարդի ու երկնքի գոյն ունի, եւ ամէն բան՝ գրախտի բոյր մը զգլխիչ, որոնցմէ անբիծ հոգի մը միայն կրնայ տպաւորուիլ:

Ուստի անհունօրէն սաստիկ եղաւ հակազդեցութիւնը այս անկումին՝ որ՝ զինքը իր վիշտերու մութ անդունդին մէջ նետեց դարձեալ շանթի արագութեամբ մը, իսպառ զըրկելով զինքը յետին սփոփանքէ մը եւ յետին յոյսէ մը. որով վերջէն թեքեւս կարենար համակերպութեան ոգին շինել:

Գիշերուան մըմէջ, իր երջանկութեանը հետ խոյս տուաւ իրմէ՝ իր վերագտած առողջութիւնն ալ: Առաւօտուն արիւն թքաւ եւ դէմքին վրայ մահուան ցաւը սկսաւ տարածուիլ:

Իր կեանքը որ քանի մը օր առաջ՝ դեղածիծաղ փթթում մըն էր, իր կատարելութեան չհասած, արագօրէն թարշամանքի փոխուեցաւ: Երկու շաբաթուան մէջ ծիւրեցաւ այնքան, որքան կը ծիւրի երկու տարիէ ի վեր

հիւանդ պառկող մէկը: Վասն զի հէք աղջըկան միտքը չէր կրնար երբէք ըմբռնել իրեն տրուած այս ահաւոր տանջանքը, որուն համար ոչ ինքզինքը կը մեղադրէր եւ ոչ ալ ամուսինը: Ի զուր կը հարցնէր ինքնին.

Քանի որ սէր ըսուած զգացում մը գոյութիւն ունէր, ինչո՞ւ աճապարեւ էին զինքը ամուսնացնելու՝ երբ զեռ ինք զայն չէր ըզգացած:

Ինչո՞ւ եղած էր այսպէս. . .

Եւ հիմայ ի՞նչ պիտի ընէր ինք, որ սէրը իմացեր էր ամենաբուռն ձգտումով մը. պիտի կրնա՞ր իր սիրտին թելադրութեանը հետեւիլ:

—Ո՛չ:

Այս «Ոչ» ին առջեւ, իր վշտասարսուռ խոհերը շանթեր կ'ըլլային իր տկար զանկին մէջ եւ ահռելի ուժգնութեամբ մը սիրտին վրայ կ'իյնային:

Եւ ա՛լ հոն, իր սիրտին մէջ, ինչ որ կը զգար, կիզում մըն էր միայն, անբացատրելի կիզում մը, որ կոկորդին մէջ ցաւի թանձր ծուխ մը կը թխմէր, զոր բզկտող հազ մը կուգար իսկոյն դուրս վանել անկէ՝ արիւնի լայն կաթիլի մը փոխելով զայն:

Այլ եւս չէր կրնար շարունակել իր պտոյտները. ուժը հազիւ կը բաւէր զինքը պատուհանին տուփեւ տանելու, ուրկէ կը սիրէր իր կորուսած եղէմը դիտել, ուր գարուն մը միայն ապրած էր՝ կանանչ խոտերուն պէս, անոնց հետ սկսելով կեանքը, ու անոնց հետ հետզհետէ մօտենալով տխուր վախճանին:

Ու կը սպասեր ա՛լ . . . :

\* \* \*

Եւ մինչդեռ Աղաւնի կը դիտէր իր կեանքին այս պատկերը՝ դաշտին մշուշին մէջ խրտացած, արեւն իր կիզիչ ճառագայթներովը անխնայ կը լիզէր հէք ճղճիմ խոտերը՝ գանոնք այրումի տառապանքով մը դալարելով հետզհետէ:


Ու խոտերը կը դեղնէի՛ն, կը տոգունէի՛ն խեղճ խոտերը:


## ՅԱՆԿ

ԽՆԳՐԱՆՔ ՄԸ	1
ԱՄՈՒՐԻԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ	6
ՊՁՏԻԿԸ	26
ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՍՐՏԻ ՄԸ ՎՐԷԺԸ	38
ՈՒՇ ՄՆԱՅԱԾ	58
ՏԺԳՈՒՆԱԾՆԵՐԸ	82









ՀՀ Ազգային գրադարան



NL0369353

55000/37

891.99

U-50